ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՄՈՒՏՔ



891.99
Հ-87

ՀԽՍՀ ՊԵՏՀՐԱՏ



14 FEB 2011
891.99
Հ-87
ար՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՄՈՒՏՔ

ՆՎԵՐ ՀԱՄԼԿՅԵՄ 20-ԱՄՅԱԿԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
19[illegible] թ.

39902

14 JUN 2013

Պատ. խմբագիր՝ Հ. Այվազյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մկրտչյան
Շապիկը՝ Ա. Սլբակյանի

Շարվածքը կատարել է լինոտիպիստ Գ. Կարճիկյան, էջ կազմ Գ. Մանուկյան, տպագրիչ Լ. Ավագյան։

1792
39

Տեղական տպարան Լենինականում. պատվեր № 100։ Տիրաժ 2300 օր.
Գլավլիտի լիազոր № 10848

# ՀԵՐՈՍՈՒՀՈՒ ՄԱՀԸ

Գիշեր է։ Փոքրիկ խրճիթում քնած են հոգնած զինվորները։ Յերեկվա ահեղ ու արյունալի կռվից հետո հանգստանում են նրանք։

Միայն կոմյերիտուհի գնդացրորդ Լուխիան և վաշտի հրամանատար Գարեյան չեն քնած։ Նստած փոքրիկ խարույկի շուրջը, նրանք փայտով խառնում են կրակը և նայում անթափանց գիշերին։

Դրսում լուռ է։ Յերկնքում աստղերն են առկայծում, իսկ ներքևում Գիմաշարամա լեռներից սառը քամին է փչում տափաստանի վրա...

Գարեյան վեր կացավ, մատներով տրորեց խոր կպչող կոպերը և դուրս յելավ։ Խրճիթի շեմքի վրա նա հետ դարձավ և շշնջաց կամաց։

— Լուխիա, հսկիր...

Նա գնաց։ Լուխիան մնաց մենակ՝ իր խոհերի հետ։ Փայտով խառնելով կրակը, նա շշնջաց. «Հաղթանակի համար հարկավոր կլինի դեռ էլի զոհեր տալ...»։

Նա հիշեց իր ծերունի հորն ու մորը, վորոնց այրեցին ֆաշիստները իրենց գյուղը գրավելուց հետո։ Նա լավ հիշում է հոր խոսքերը. «Ազատության համար կյանքդ չխնայես, վորդիս...»։

Դռան ճռոցն ընդհատեց նրա մտապատկերները, Գարեյան, տաքացնելով ոտքերը վերադարձավ և նստեց նախկին տեղում։

Չոր ցախերը ճարճատելով կտրտվում էյին խարույկի վրա և ցոլքեր արձակելով լուսավորում խրճիթի ներսը։

Նրանց լույսի տակ պարզ յերևում եր Լուխիայի դեմքը։ Սև գանգուրները թշնելով սպիտակ ու նուրբ դեմքի վրա, նրան տալիս էյին առանձնակի գրավչություն։ Դիմագծերից յերևում եր, վոր նա 18—19 տարեկան է։

Չնայած դրան, վարթամ, յերկարհասակ ու առնական եր կեցվածքը։

Լուխիան վերցնելով փայտը, խառնեց կրակը և դարձավ Գարեյանին.—

— Յերբ ավարտվի այս արյունոտ կռիվը, անպատճառ կգնամ այնտեղ, Կարմիր Մոսկվա, ուր ապրում է նա... Հանկարծ նա կանգ ա-

ռով, նայեց պատուհանից դուրս, հեռու հորիզոններին և հուզմունքով շշնջաց.

Նա... Ստալինը...

Այս նայելով Գոբելոյի պայծառացած դեմքին, նորից խառնեց բորբոքվող կրակը:

— Այո՛ դա իմ ել վաղուցվա յերազն է, պատասխանեց Գոբելոն և ավելացրեց.— հարկավոր է պատերը ստուգել...

Նրանք ոտքի յելան...

Նոր եյին բացել դուռը, յերբ լսվեց մի զիլ կրակոց...

«Պարզ է, պահակի ազդանշանն է», մտածեց Գոբելոն և հրամայեց կռվի շեփորը հնչեցնել...

Լսվեցին կարճ, զիլ հնչյուններ և լռեցին գիշերվա խավարի մեջ:

Վաշտը ոտքի վրա յե: Կոմյերիտուհի Լուխուան իր գնդացրի մոտ է:

Հեռվում փորոտում են հրանոթները, բոց ու կայծեր թափելով իրենց սև յերախներից: Օդում թռչում են հրթիռներ, վորոնք մի պահ լուսավորելով շրջապատը, հալվում, կորչում են արյունոտ հողի վրա...

Թշնամին քողարկված գիշերվա խավարով, սողում է առաջ: Հրթիռների լույսի՝տակ պարզ յերևում է նրանց յերկու անգամ գերազանց լինելը:

Բայց ահա քայլ նրանք մոտենում են դիրքերին: Գոբելոն վազում է մի դիրքից մյուսը, դասավորում մարտիկներին, հրահանգներ տալիս: Սողացող թշնամին ավելի մոտենալով կրակ է բացում...

— Վառել հրթիռը — ձայնեց Լուխուան և ձեռքով բռնեց գնդացրի ռեմինը:

Խրամատից դուրս թռչող հրթիռը պայթելով օդում դարձավ անձրևի հեղեղ և լուսավորեց լեռանցքը: Պարզ յերևացին թշնամու սողացող շարքերը:

Լուխուան սեղմեց գնդացրի ձգանը... Տկտկաց գնդացիրը՝ յերկաթե կարկուտ թափելով թշնամու վրա: Նոսրացած շարքերով հետ քաշվեց թշնամին: Սակայն չանցած մի քանի րոպե, յերևացին նոր խմբեր:

Լուխուան նորից կրկնեց՝ «վառել հրթիռ»: Յեվ նորից տկտկաց գնդացիրը:

Մթության միջից յեկող ճիչերն ու հառաչանքները վկայում եյին թշնամու կորուստների մասին:

Լուսանում եր:

Թշնամին մի վերջին ճիգ ել գործադրեց բարձունքը գրավելու: Գրոհը նրանք սկսեցին խիտ շարքերով, գնդացրի և նռնակների ոգնությամբ:

Գնալով ավելի յեր մոտենում թշնամու շղթան: Մարտիկները կռվում են հերոսաբար, անձնվեր ու առանց խուճապի: Տարածությունն ավելի կարճացավ: Նրանք արդեն 15—20 քայլի վրա յեն: Լսվեց մի ուժեղ, արի կանչ՝



— Լուխուա, ուժեղ կրակ, մյուսները իմ հետևից,— ձայնեց Գոբելոն և դուրս թռչելով դիրքից վաշտը տարավ գրոհի՝ թվով գերազանց թշնամու վրա:

Սկսվեց արյունոտ սվինամարտ:

Յերերաց թշնամու շղթան, խառնվեցին մարդիկ ու հետ դառնալով փախան...

Լուխուան կրակում է նրանց հետևից, դադար չտալով վոչ մի վայրկյան...

Մոտիկում պայթեց մի ռումբ: Նա վեր բարձրացրեց հողը և ծածկեց Լուխուայի տեսադաշտը:

Լուխուան տաքություն զգաց ոտքի վրա: Բռնեց ձեռքով: Դուրս ցայտող արյունը ներկեց նրա մատները:

Մի պահ լռեց գնդացիրը...

Գոբելոն վազեց գնդացրի մոտ: Թշնամին հետ դարձավ գրոհի...

Լուխուայի մշուշված աչքերը պարզ նշմարեցին առաջ վազող թշնամու շղթան...

Նա գործադրեց իր ճիգերը, սեղմեց ատամները և ամուր հպեց գնդացրի ձգանը...

Տկտկաց գնդացիրը...

Գոբելոն հասնելով Լուխուային ձայնեց.

— Դու վիրավորված ես, անցիր թիկունք: Աղջիկը համառում եր.

— Վո՛չ, դա անհնար է, իմ մեջ դեռ շատ ուժ կա, կմեռնեմ, բայց շարքից չեմ դուրս գա:

Ու նորից տկտկաց գնդացիրը, թշնամու վրա թափելով յերկաթե կարկուտ...

Սևահեր սանիտարուհին նստած վիրավորվածի մահճակալի մոտ, քնքշությամբ շոյում է նրա մազերը: Հետո բարձրանալով նստած տեղից համբուրում է նրա ճակատը և շշնջում. «Իմ հարազատ ընկեր, իմ անուշ քույր, դու հերոսուհի յես...»:

Գունատ է նրա դեմքը ինչպես կտավ, ավելի գունատ, քան փղոսկրը::

Կռվի դաշտում և վիրահատման ժամանակ կորցրած արյունը նրան ուժասպառ են արել: Նա շնչում է դանդաղ և շատ խոր: Հաճախ բացում է աչքերը և կարոտանքով դուրս նայում բաց պատուհաններից:

Անցան օրեր: Վիրավորը կազդուրվեց և ոտքի կանգնեց: «Ո՜հ, վորքան բախտավոր եմ, վոր չկտրեցին ոտքս, հակառակ դեպքում, ինչպե՞ս պետք է նորից կռվի դաշտ մեկնեյի»— մտածում է նա և բացելով պատուհանը նայում է դուրս:

Հեռվում ձյունով ծածկված լեռներն են մշուշի մեջ կապտին տալիս, իսկ ներքևում տափարակն է սփռված արտերով:

«Այնտեղ, նորից այնտեղ»— կամաց շշնջում է նա և փակելով պատուհանը նստում է մահճակալի վրա: Հետո, վերցնելով թուղթը և մատիտ գրում է:

«№ Գնդի շտաբին...

Յես արդեն առողջ եմ: Խնդրում եմ նորից ինձ ուղարկեք ճակատ Գվադարամայի լեռնանցք՝ իմ վաշտը՝ Դոլորեսի անվան... մերժելու դեպքում կգնամ ինքս...» այստեղ նա կանգ առավ և մտածեց՝ «վո՛չ, վերջին տողը լավ չէ, անկարգապահության պես ինչ որ բան կա»:

Ուստի ջնջեց, նրա փոխարեն գրելով՝ «Խնդրում եմ, անչափ խնդրում, որ կատարեք իմ ցանկությունը, թող իմանա արյունոտ ֆաշիզմը, թե ինչպիսի նվիրվածությամբ է սիրում իր հայրենիքը իսպանուհին:

Կոմյերիտական գնդացրորդ Լուիսա»:

Գրածը խնամքով դնելով ծրարի մեջ, նա տվեց իր բարեկամուհուն՝ սանիտարուհուն: Վրա հասավ գիշերը: Մութը թանձրացավ յերկրի վրա և ամեն ինչ առավ իր աներևույթ թևի տակ: Նրա մեջ կորան և այն ձյունածածկ լեռները, որոնց կարոտանքով շարունակ նայում էր Լուիսան:

Վողջ գիշեր Լուիսան չքնեց. անհամբեր սպասում էր բարեկամուհու վերադարձին:

Լուսաբացի մոտ յերևաց սանիտարուհին:

Լուիսան ընդառաջ վազեց:

— Բերեցիր պատասխանը,— հարցրեց նա և մեկնեց ձեռքը:

— Այո,— կարճ ասաց սանիտարուհին և գրպանից հանեց ծրարը:

Լուիսան բացեց և կարդաց.—

«Գնդացրորդ մարտիկ Լուիսային

Հրամանատարությունը գնահատելով ձեր անձնուրացությունը, որ ցույց եք տվել կռվի դաշտում, ձեզ պարգևատրում է թանկագին նվերով և բարձրացնում լեյտենանտի կոչման:

Հարգելով ձեր դիմումը, թույլատրվում է մեկնել Դոլորեսի անվան վաշտ՝ ստանձնելու նոր պաշտոնը: Հաջողություն: Սեղմում ենք Ձեր արի ու անզիջում ձեռքը...:

Գնդի շտաբի պետ՝ Նավարա, կոմիսար՝ Գարսիա

Գրությունը Լուիսան կարդաց մի քանի անգամ և ուրախությունից գրկելով սանիտարուհուն ասաց.

— Այնտեղ, այնտեղ... մեզ են սպասում ժողովուրդների աչքերը:



Մյուս օրը մեծ դժվարությամբ հաջողվեց համոզել բժշկին, յերկար ժամանակ համառում էր բժիշկը— «չեմ կարող դուրս գրել, դեռ հում է վերքը»:

— Վոչինչ, ընկեր բժիշկ, մինչև ճակատ հասնեմ հում վերքը կփակվի— կատակելով ասաց Լուիսան և բժշկին մեկնեց թուղթն ստորագրելու:

Հաջորդ օրը, մեկնելուց առաջ Լուիսան մեկ առ մեկ մոտեցավ վիրավոր զինվորներին, սեղմեց նրանց ձեռքերը, առողջություն ցանկացավ և դուրս յեկավ հիվանդանոցից:

Բակում նա ամուր գրկեց սանիտարուհուն, համբուրեց և ասաց.

— Իսպանուհին հայրենիքի համար պատվով կկատարի իր պարտքը...

Նա գնաց:

Ձգվող փոշոտ ճանապարհի վրա կամաց-կամաց փոքրացավ նրա ֆիգուրան, մի քիչ էլ և հորիզոնի վրա կորավ նրա սիլուետը:

Սանիտարուհին հետ դարձավ շշնջալով՝

— Իմ քույր, իմ հարազատ, հերոսուհի յես դու...

* * *

Կռիվը լեռանցքի համար գնալով սաստկանում էր, ամբողջ օրը տեղում էր յերկաթե անձրևը: Արկերի պայթյունից դղրդում էր կիրճը և խուլ արձագանք տալիս: Լուիսան իր դասակի հետ միասին գտնվում է առաջավոր դիրքերում: «Պահել լեռնանցքը, ինչ գնով էլ լինի». Այսպես է հրամանը— ասում է Լուիսան և սեղմելով գնդացրի կոճակը վոգևորում է մարտիկներին:

Կեսօրվա մոտ թշնամին ստանալով նոր ուժեր, տանկերի օժանդակությամբ դիմեց գրոհի:

Լուիսան պառկած անընդհատ կրակում է:

«Չնահանջել վոչ մի քայլ»— ձայնում է Լուիսան և սեղմում է գնդացրի ձգանը:

«Կարելո, ժապավեն հասցրու, փամփուշտները վերջանում են» ասում է նա և սպասում. վոչ մի ձայն չկա, նա չլսեց սովորական «լսում եմ, ընկեր հրամանատար» բառերը: Գնդացիրը լռեց: Լուիսան հետ նայեց և տեսավ Կարելոյին փռված գետնի վրա:

Կարմիր արյունը հոսելով նրա ճակատի վրայից, ներկել էր դեմքը: Լուիսան մոտեցավ, համբուրեց նրա ճակատը և շշնջաց. «Իմ լավ, իմ արի ընկեր»:

Թշնամին մոտենում էր:

Լուիսան սողալով իջավ բլինդաժի մեջ և անմիջապես դուրս յեկավ իր հետ տանելով գնդակներով լեցուն ժապավենը:

Գնդացիրը նորից սկսեց տկտկալ:

Կռիվը գնալով սաստկացավ:

Քիչ անց հորիզոնի վրա յերևացին սավառնակներ:

Սկսեց կրակել հրետանին:

Յերեկոյան շեմ հրամանատարությունը վորոշեց, ավելորդ կորուստներից խուսափելու համար, քաշվել պաշտպանության նոր գիծ:

Լուսինյայի խնդիրքով իր դասակը մնաց խրամատում, նահանջը պաշտպանելու համար: Արի կոմյերիտուհին պատսպարելով իր մարտիկներին սպասեց: Թշնամին ավելի մոտեցավ:

Այդ պահին նա բացեց կրակ: Թշնամին հետ քաշվեց: Բայց մի քիչ անց, նորից կրկնվեց գրոհը:

Գնդացիրն անվրեպ հնձում է թշնամու շարքերը:

Բայց ահա տկտկաց գնդացիրը և լռեց հանկարծ... Թշնամին վայրենի բացականչություններով սլացավ բարձունքը...

— Կենդանի բռնել այդ խիզախուհուն.— հեռադիտակն աչքերից հեռացնելով ասաց ֆաշիստ գեներալը:

Լուսինյայի բոլոր ընկերները մեկ առ մեկ ընկան հերոսական մահով:

Բարձրունքում նա մնաց մենակ:

Թշնամին ողակում է չորս կողմից:

«Անձնատուր յեղիր, անձնատո՛ւր յեղիր»— կանչում են չորս կողմից և ավելի ու ավելի սեղմում ողակը: Լուսինյան գնդացրի մեջ անցկացրեց վերջին ժապավենը և թույլ տալով թշնամուն ավելի մոտենալու՝ բացեց կրակ...

Վզզալով թռավ մի գնդակ և ծակեց նրա ուսը... քիչ հետո մեկ ուրիշը ծակեց ձախ ձեռքը... Ցավ չնայած արյունը կաթում էր մարմնի մասերից, բայց նա կրակում էր, ու կրակում...

— Կենդանի բռնել և խարույկի վրա այրել— բղավում է գեներալը և կատաղությունից մի կողմ նետում հեռադիտակը:

Մի քանի վարկ էլ և ընդմիշտ լռեց գնդացիրը...

Թշնամին քայլ առ քայլ մոտենում է հերոսուհուն:

Լուսինյան դուրս քաշելով ատրճանակը, հաշվեց գնդակների թիվը՝ «7 հատ, վեց հոգու կոտորելու»— մտածեց նա ու քողարկվելով, սպասեց:

Գրոհողների առջևից գալիս էր ֆաշիստ սպան՝ «Հա՛, հա՛, հիմա մեր ձեռքումն ես»-կանչեց նա և վազեց առաջ: Լուսինյան քաշեց ձգանը: Սպան փռվեց գետին: Նրան հաջորդեց մեկ ուրիշը, յերրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը, բոլորն էլ ընկան նրա անվրեպ կրակից:

Լուսինյան նայեց ատրճանակին, մնացել էր մի փամփուշտ՝ «Թող



մնա, պետք կգա»— ասաց նա և հետ նայելով շշնջաց.

«Այժմ կարող եմ հանգիստ սրտով մեռնել, խնդիրը կատարված է»:

Թշնամին մոտենում էր:

Վայրենի քրքիջները գնալով ավելի ուժեղ և բարձր եյին դառնում՝ «հիմա մեր ձեռքումն ես, կտոր, կտոր կանենք, հում-հում կուտենք» —կանչում եյին միջնադարյան ինկվիզիտորները և սեղմում ողակը:

—«Այդ ձեզ չի հաջողվի»— կանչեց արի կոմյերիտուհին և ատրճանակի փողը դրեց քունքին... Լսվեց մի ահեղ դղրդյուն և Լուսինյան փռվեց գետնին...

— Թու, դրողը տանի, չհաջողվեց, ճչաց կատաղած գեներալը և վրեժով հարվածելով Լուսինյայի անկենդան մարմնին գոռաց՝ կապել ձիու պոչից, թող հոշոտվի մարմինը...

Մոտիկում լսվեց արկերի պայթյուն: Վեր բարձրացող հողը ծածկեց մարդկանց:

Գնալով շատացան պայթյունները: Քիչ հետո օդում յերևացին կարմիր շերտեր ունեցող սավառնակներ... Հաղթական թափով առաջ եյին նետվում ողնական ուժեր ստացած հանրապետական զորքերը...

Թշնամին ճողոպրեց, թողնելով մարդկային դիակներ, զենք և հանդերձանք...

* *

Լուսաբացին հանրապետականները հաղթականորեն մտան քաղաք, իրենց հետ տանելով մի կարմիր դագաղ: Դագաղի առջևից գնում էր կապիտան Գաբրիելը՝ կարմիր դրոշակը ձեռքում բռնած: Իսկ հետևից գալիս եյին հրամանատարները և զինվորները, գլխարկները հանած:

Հասնելով քաղաքի հրապարակը, նրա ձախ անկյունում նրանք մի փոս փորեցին և կամաց-կամաց իջեցրին դագաղը:

— Ընկեր մարտիկներ,— խոսեց հրամանատարը, մենք հողին ենք հանձնում մի հերոսուհու, վորն իր կյանքը զոհեց հանուն ժողովրդի ազատության... Նրա հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում...

Հրամանատարը վերջացրեց: Արցունքի յերկու խոշոր կաթիլներ ընկան նրա աչքերից և կորան հողի մեջ:

Լսում էր Գաբրիելը և մտաբերում այն որերը, վոր նա անց էր կացրել կռիվներում Լուսինյայի հետ: Նա հիշեց և այն յերեկոն, յերբ նստած խրճիթում վառած խարույկի շուրջը, զրուցում եյին իրար հետ: Հիշեց նաև այն ցանկությունը, վոր շարունակ իր կրծքի տակ

փայփայում էր Լուխսան: Յեթե կենդանի մնամ, թանկագին Լուխսա, մտքում ասում էր Զորելը, կգնամ այնտեղ՝ կարմիր Մոսկվա և կասեմ քո ցանկության մասին...

Հնչեց Ինտերնացիոնալը:

Խոնարհվեցին դրոշակները, նրանց հետ նաև մարդկանց գլուխները...

Քիչ հետո բարձրացավ մի հողե թումբ:

Կապիտան Գորելը մարտիկների հետ հողաթմբի վրա ամրացրեց մի տախտակ վրան գրելով.

«Կոմյերիտուհի Լուխսիա Գարսիա, 19 տարեկան, մեռավ հերոսի մահով՝ հանուն ժողովրդի ազատության...»:



# ԿԱԹԻԼՆԵՐ

Միլլերը մեկ ձեռքով կռթնած սեղանին, մյուսով՝ օղու շիշը բռնած մռնչում էր իր առջևում կանգնած մարդու վրա:

— Չի առ՛, յես նրան ցույց կտամ,— ասում էր նա, կոնծում լիքը բաժակը, հետո դատարկ շիշը խփում սեղանին, կատաղածի ընկած հայացքով նայում ժամացույցին և փնթփնթում՝ սրանց վոչ վերջ կա, վոչ թիվ, իսկ յես ուշանում եմ իմ գեղեցկուհու հետ ունենալիք ժամադրությունից: Նա նորից նայեց ժամացույցին, քացախ խմած մարդու նման ծամռեց դեմքը, քրքրեց ինչ վոր թղթեր, հետո բացելով մի նոր շիշ, դարձավ առջևում կանգնած գրոհայինին և ասաց.—

— Ներս բերել կալանավոր Կարլ Բրեդելին:

Գրոհայինն ամուր իրար խփեց խթանները, հետ դարձավ և անհայտացավ յերկար միջանցքում:

Կամաց ճռնչաց դուռը:

Ներս հրեցին շղթայակապ Կարլին:

Ձեռքերի վրա շղթայի թողած ժանգը ցույց էր տալիս, վոր նա յերկար ժամանակ է ինչ գտնվում է կալանքի տակ: Նա դունատ էր ինչպես կտավը:

Միայն նրա պույզ վառվռուն սև աչքերը, վոր փայլում էին քունքի վրա ընկած խոպոպներում, ասում էին, վոր նա յերբեք ու յերբեք չի կորցրել իր արիությունը:

Վոչ տանջանքը և վոչ էլ խոշտանգումները չէյին ընկճել նրա հոգին:

Միլլերը բորբոքված ու կարմրատակած աչքերը հառելով Կարլ Բրեդելի վրա, մոտեցավ նրան և ատրճանակը դնելով սեղանի վրա, հեգնանքով ասաց.

— Ուրեմն հրաժարվում եք գաղտնի ապարանի տեղն ասել:

— Յես ուրիշ պատասխան չունեմ,— ասաց Կարլը և մի հայացք գցեց իր շրջապատի վրա:

Խառնափնթոր սենյակում ողու շշերն էյին համատարած թափված. ու նրան թվաց, թե ինքը գտնվում է գինետնում, վորտեղից փչում է գզվանք առաջացնող գարշ հոտ:

Միլլերը նորից նայեց ժամացույցին, վոտքով հրեց աթոռը, քայլեց մինչև սենյակի դուռը, հետ դարձավ և դառնալով գրոհայինին հրամայեց՝

— Գանգին հասցնել տասը հարված:

— Ի՞նչով կհրամայեք, շշո՞վ, թե ռեզինե մահակով:

— Ռեզինե մահակով, դե շուտ,— գոռաց Միլլերը և նորից նայեց ժամացույցին:

Հարվածները մեկը մյուսի հետևից իջնում էյին անդադար: Սովից, տանջանքից ու խոշտանգումներից մաշված Կարլն օրորվում էր հարվածների տակ: Նա գետին կընկներ, յեթե մեկը շարունակ բռնած չպահեր նրան:

Նա վոչ մռնչաց, վոչ էլ ընկճվեց, հերոսի նման տարավ տանջանքը և սպասեց վախճանին:

— Դարձյա՞լ հրաժարվում եք,— ատամները կրճտացնելով մռնչաց գեստապոյի քննիչ Միլլերը:

Բրեդելը լուռ էր: Նա հենված էր պատին գունատ, ուժասպառ, և հեգնաբար ժպտում էր նրա ծամածռությունների վրա:

Միլլերի կատաղությանը չափ չկար:

— Ձեզ հետ եմ, պատասխանեցեք, թե չէ կսատկեցնեմ,— բղավեց Միլլերը և ատրճանակն ուղղեց Կարլի ճակատին: Ահա, ահա, նա կքաշի ձգանը, կլսվի խլացուցիչ ձայն և պատի տակ կանգնած մարդը կգլորվի հատակի վրա: Միլլերը ավելի մոտեցավ: Սառը պողպատը շոշափեց Կարլի ճակատը...

— Միևնույն է, ձեզ չի հաջողվի ընկճել կոմունիստի հոգին, դե՛հ խփեցեք, էլ ի՞նչ եք կանգնել,— ասաց Կարլը և ավելի հպարտորեն բարձրացրեց գլուխը:

Կատաղությունն անսանձ ձիու նման փրփրեց և նստեց Միլլերի շուրթերին: Նա հետ քաշեց ատրճանակը և նրա յերկաթե կոթով մի ուժգին հարված հասցրեց կալանավորի ճակատին: Դուրս ցայտեց արյան բարակ շիթը և ներկեց նրա կուրծքը:



Միլլերը դառնալով գրոհայինին, հրամայեց.

— Պառկել Հայլ Հիտլերի հնարած «կաթիլների» պատժով...

* * *

Յերեկոն, վոր թանձրացավ մռայլ բանտի վրա, ասես մահվան չարագուշակ ուրվական դարձավ ու շրջեց ամեն խուց: Նա սև, անտեսանելի գիշատիչ թռչնի նման պարնվեց պատերին, անցավ միջանցքներով, հետո դուրս թռավ՝ իր հետ գրկած մահը տանելով:

Կարլի խցիկում չէր առկայծում և վոչ մի լույս: Անկյունում նստած, նա խորհում էր իր ընկերների անվտանգության մասին: Ահա նա լսեց շրմփալին բացվող դռների ձայնը և թափվող շղթաների զրնգոցը:

Կարլը հասկացավ, վոր դրանք նոր կալանավորներ են:

— Պետք է իմաց տալ բանտում յեղած ընկերներին, վորպեսզի նրանք նախազգուշացնեն նոր ձերբակալվածներին, ավելորդ ցուցմունքներ չտալու համար. քանզի շատ լավ գիտեմ, վոր մինչև վաղը մահն իր սառը ճանկերի մեջ կառնի ինձ,— մտորում էր Կարլը և տանջված ու ջարդված մարմինը հազիվ քաշ տալով հասավ պատին: Նա մի քանի անգամ բախեց պայմանական նշաններով և ամբողջ էությամբ լարելով ուշադրությունն անհամբեր սպասեց պատասխանի:

Վարկյանները տանջալի տարիներ էյին թվում:

Վերջապես լսվեց պայմանական պատասխանը...

Այժմ վոչինչ չունեմ վախենալու համար, «մահը սարսափելի չէ մեռնողի համար, մահը սարսափելի յէ մնացողների»— դահիճ հիտլերների համար:

Նա հետ դարձավ ու նստեց հողե թաց հատակի վրա:

Կրնկի վրա ճռնչաց դուռը:

Նախքան մարդու ֆիգուրայի յերևալը, նա տեսավ անտաշ, խունացած, թաց, մամռակալած դագաղը, վորը ներս էր հրում բանտապահը:

«Պարզ է, յերջանկության կաթիլները, այդ նշանակում է կենդանի-կենդանի թաղել»,— անցավ Բրեդելի մտքով: Նա չսոսկաց, բայց մտքում կրկնեց թերևս հազար անգամ կրկնածը՝

«Ահա, թե ինչպես է յերջանկացնում Հիտլերը գերմանական ժողովրդին»:

Բանտապահը դագաղը դրեց խոնավ հատակին և բացեց կափարիչը:

Երկու գրոհայիններ մոտեցան Բրեգելին և ավելի ամուր սեղմեցին նրա ձեռքերի ու վոտքերի շղթաները...

— Ի՞նչ եք ուզում անե՛լ.

— Ինչ ենք ուզում անել, փոքրիկ, կաթիլներով անմահություն ենք տալու քեզ, այնպես է ասել Հայլ Հիտլերը—հեգնանքով պատասխանեցին գրոհայինները և հռհռացին ցինիկաբար:

— Դուք այդ չեք համարձակվի անել...

— Դու վոչ առաջինն ես և վոչ էլ վերջինը, այս դագաղն արդեն փթել է քեզ նման շատերին տեսնելով,— ասացին նրանք և քաշ տալով Կարլին պառկեցրին դագաղի մեջ:

Մինչ գրոհայինները բոլոր կողմերից ամուր մեխում եյին դագաղի կափարիչը, ծեր բանտապահը գրպանից հանեց ողու շիշը, դրեց շուրթերին և մրմնջաց. «Հրաշալի պատիժ, նա ամեն մարդու համար մեկ տալիս է մի շիշ ողի...»: Դագաղի մեջ պառկած Կարլին թվաց, թե դա հազարավոր մայրերի, յերեխաների արյուն արցունքն է խմում Հիտլերը՝ բանտապահի խորշոմած շուրթերով:

— Բայց այս ի՞նչ է, նրանք չեն տանում դագաղը խորը փոսում կենդանի, կենդանի թաղելու: Գոնե հողը շուտ վերջ կտար իր չնչությանը,— մտածում եր Կարլը և անմռունչ տանում եր անասելի տանջանքը...

«Յերջանկության կաթիլները» դրանից ավելի սարսափելի պատիժ եր նախատեսնում...

Բանտապահը, գինովցած ու ցանցառ մորուքով այդ ծերուկը, հեշտությամբ դագաղը քաշ տվեց պատի տակ և գրպանից հանելով ինչ-վոր գործիք սկսեց նրա մեջ պառկած մարդու ճակատի վերևում անցք բացել... գործիքի ծայրն ամեն անգամ կպչելով Բրեգելի ջարդված ճակատին, սուր ցավ եր պատճառում ու վորպես ծակոց զարկում սրտին...

Վորքա՜ն, վորքա՜ն կուզեր Բրեգելը, վորպեսզի այդ գործիքը մեկ անգամից ջարդեր իր գանգը և վերջ տար անտանելի ինկվիզիցիային...

Դագաղի վրա բացված անցքում բանտապահը դրեց մի ձագար և հրամայեց գրոհայինին բացել «յերջանկության կաթիլների» ծորակը: Գրոհայինը, վորը սովոր եր այդ արհեստին, առանց դժվարության մութ խցիկի առաստաղի վրա գտավ ծորակը և բացեց այն...

Գրոհայինները դուրս յեկան: Նրանց հետևեց բանտապահը, վոր դատարկելով շշի մեջ մնացած ողին, այն պահին, յերբ փակում եր դու-



ռը, մրմնջաց. «Հրաշալի պատիժ, նա ամեն մարդու համար մեկ տալիս է մի շիշ ողի»:

Ու Կարլին թվաց, վոր դա հազարավոր մայրերի, յերեխաների արյուն արցունքն է խմում Հիտլերը, ծեր բանտապահի խորշոմած շրթունքներով...

Յեվ վորպես արյուն արցունքի կաթիլներ բացված ծորակից սկսեց հատ-հատ կաթել ջրի սառը, սառը կաթիլները...

Յերբ առաջին կաթիլն ընկավ Բրեգելի ճակատի վրա, նրան թվաց, թե ինչ վոր մեկը խուտուտ անեց: Ճակատի վրա այրվող վերքի ցավն ասես կտրեց և այդ նրա համար դուրեկան թվաց:

Ահա ընկավ յերկրորդ կաթիլը. նա սահեց քունքի վրայից և ընկավ աչքի խոռոչը...

— Ի՞նչ, յես լալիս եմ, վո՛չ,— ու նա փորձեց ձեռքերը տանել դեպի աչքը և սրբել թացությունը...

Բայց միայն զրնգացին շղթաները և նա անասելի ցավ զգաց:

Ահա ընկավ և յերրորդ, չորրորդ, հինգերորդ... տասներորդ կաթիլները, վորոնք սրբելով ջարդված ճակատի վերքի չորացած արյունը հոսեցին աչքերի վրա...

— Վո՛չ, յես լաց չեմ լինում, նրանք չեն կարող լացացնել ինձ.— ասաց նա ու թափ տալով իրեն միայն ցավ պատճառեց մարմնին...

Բրեգելին պատեց թմրություն և նրա գոցված աչքերի առաջ ասես կինո ժապավենի նման մեկը մյուսի հետևից, կարճ, կտրտված անցան անցած օրերի հուշերը, դեպքերը և՛ ուրախալի և՛ տանջալի...

Նա հիշեց իր ալեհեր մոր արտասվալից աչքերը, այն պահին, յերբ գրոհայիններն իրեն ծեծելով դուրս եյին տանում տնից:

Նա չվողբաց, չբղավեց, այլ կուլ տալով անձայն լացի արցունքներն ասաց.

— Չնկճվես, մայրի՛կ, ամուր կաց ու մի դավաճանիր գործիդ:

Ահա և իր փոքրիկ Կարլիկը, վորը վախեցած գրոհայինների քաշքշուկից բռնել է մոր փեշից, սառած հայացքով նայում է իրեն ու ձայնում՝

— Պա՛պա, պա՛պա, մի՛ գնա...

Իսկ կինը՝ Նելլին կարողացավ միայն մի պահ մոտենալ իրեն, լսել հանձնարարությունները՝ ընկերներին հաղորդելու համար:

Նելլին չկարողացավ հրաժեշտ տալ, գրոհայինը ամուր հրեց նրան

և նա չըմփալեն գետին գլորվեց։ Յեվ յերբ Բրեդելին ուզեց պաշտպանել, ամուր բռնեցին ձեռքերը և կապեցին...

Ահա և գործարանի ներքնհարկում հրավիրված գաղտնի ժողովը, ուր ինքը խոսում է գերմանական ժողովրդի ազատագրական պայքարի մասին...

Ու նրա աչքերի առաջ բացվեց մի փառահեղ տեսարան։ Մայիսի մեկը, հազարավոր ցուցարարների շարքերը ծփում են փողոցներում, իսկ արևը, բոլը, հրակարմիր արևն իր շողերով վոսկեզօծել է շարքերը...։

— Արև, ո՛հ, դու մայր, դու վոսկեհեր կյանք, յես կարոտել եմ քեզ, մրմնջացին նրա այրվող շուրթերն, ու նրան թվաց, թե նա իր գլխի վերևվումն է և ժպտում է մանկական քաղցր ժպիտով։ Ահա նա մեկնում է ձեռքերը, վորպեսզի նրա անգին վարսերից պոկի մի փունջ և շոյի դեմքը...

Բայց գրնդացին շղթաները...

Սառը ջրի կաթիլներն անընդհատ ծեծում եյին նրա ճակատը։

Նրանք գլորվելով լցվում եյին աչքերի մեջ և մտնում շուրթերին...

Նա բացում եր շուրթերը, ուզում եր անհագորեն ծծել ջրի կաթիլները և հագեցնել սրտի ծարավը... սակայն նրանք, «յերջանկության կաթիլները» շուրթերի մոտից թեքվում եյին վար և այտերի վրայով ցած հոսում...

Յեվ յերբ մի քանի անգամ յերկնքում աստղեր յերևացին, հետո հալվելով կորան, «յերջանկության կաթիլները» ծակեցին ջարդված վոսկորի տակ յեղած թաղանթը և ընկան Բրեդելի ուղեղի մեջ...

Նա մեռավ...

Սակայն, վոչ հառաչեց և վոչ էլ ճչաց, վոչ մռնչաց և վոչ էլ ընկճվեց...

* * *

Առավոտյան Գեստապոյի քննիչ Միլլերին զեկուցեցին, վոր «յերջանկության կաթիլները յերջանկացրել են կալանավոր Բրեդելին»։

Միլլերը վոլորեց բեխերը, և ինքնագոհ մռթմռթաց.— «Հայլ Հիտլերը հզոր է իր յերջանկության կաթիլներով»։

Հետո նա վերցրեց մի թուղթ և գրեց. «Հայտարարել մամուլում,



վոր կալանավոր Կարլ Բրեդելը մեռավ փախուստի ժամանակ, այն պահին, յերբ նա թռավ պարսպից և կպչելով քարին ջարդեց գանգը...»։

Գրոհայինը թուղթը ձեռքին դուրս յելավ և շտապեց խմբագրություն։

Իսկ ջրի սառը, սառը կաթիլները դեռ շարունակում եյին անընդհատ ծեծել մեռած մարդու ճակատը...

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀՈՒ ՍԻՐՏԸ

Էմիլիան, այդ օրն ամեն անգամվա նման ուշ վերադարձավ տուն և նստեց գրասեղանի առաջ: Եվ չնայած անսահման հոգնածության, վերցրեց գրիչը և սկսեց գրել:

Գրում էր նա, ու նրա սիրտը բաբախում էր ստեղծագործական ավյունից: Նա գրում էր նոր յերգեր և նրանց մեջ հառնում էր գերմանական ժողովրդի պայքարի ու ազատության վոգին: Գրում էր նա ու նրա յերգերում իր սիրտն էր բոցկլտում, վորպես վառ արև...

Ո՛հ, այդ յերգն էր պայքարի, հաղթանակի ու ցնծության:

Գիշերը, գիշերի հեռվից նա յերգ էր հյուսում իր ժողովրդի վըշտի ու տառապանքի մասին և պատմում աստղերին:

Գիշերը, գիշերի հեռվից նա ազատության յերգ էր հյուսում իր սրտի արյունով ու յերգում մարդկանց...

Նա գրում էր դողով, սասանած մարմնով, իր սրտի արյունով, վոր ասես հոսում էր գրչի ծայրից և կենդանություն առնում սպիտակ թըղթի վրա:

Նա գրեց ամբողջ գիշեր ու նրա յերգն ստեղծվեց լուսնի շողերի տակ, աստղերի անուշ դայլայլներով...

Յերբ վերջացրեց, արդեն խորունկ գիշեր էր:

Նա վեր կացավ ու դուրս յեկավ, իր հետ նոր գրած բանաստեղծությունները առնելով:

Էմիլիան քայլում էր արագ, ուշի ուշով դիտելով շրջապատը: Անցնելով ծուռ ու մութ փողոցներով նա դուրս յեկավ քաղաքից ու մոտեցավ մի փոքրիկ անտառի: Մտնելով անտառի մեջ, նա այնտեղից ներքնուղիով հասավ գետնի տակ գտնվող գաղտնի տպարանն ու հանձնեց բանաստեղծությունները: Յերբ սկսեցին աշխատել մեքենաները, նա դուրս յեկավ տպարանից և քայլերն ուղղեց դեպի տուն... Նա տուն



հասավ ցայգալույսին, նստեց գրասեղանի առաջ, գլուխն առավ ափերի մեջ ու այդ դրությամբ էլ քնեց:

Կեսօր էր:

Փողոցներում իրարանցում էր:

Պատերի մոտ խռնված մարդիկ ագահորեն կարդում էին Էմիլիայի նոր գրած բանաստեղծությունները: Կարդում էին նրանք, վոգեվորվում և վեր բարձրացնելով սեղմված բռունցքները ձայնում էին՝

— «Ռոտ ֆրոնտ», «ռոտ ֆրոնտ»:

Այդ պահին լսվեցին սուլիչների ձայներ և դեպի փողոցներում խռնված մարդիկ սլացան ձիավոր վոստիկանները...

Նրանք քառատրոփ արշավելով, ռետինե մահակներով ծեծում էին մարդկանց, կրակում ատրճանակներից:

Ավելի առաջ ընկած ձիավորները հասնելով նրանց, տրորում էին ձիերի սմբակների տակ...

Ահա մի վոստիկան ամուր խթանելով փրփրակալած ձիուն, սլացավ մի գանգրահեր տղայի հետևից գոռալով. «Բաց թող ձեռքիդ թերթիկը, կանգնի՛ր»...

Տղան չլսեց վոստիկանին և վորքան ուժ ուներ առաջ նետվեց:

Վոստիկանը կատաղած ձին քշեց նրա հետևից... Ձին դոփելով սալահատակը սլացավ առաջ... Նրա սմբակների դոփյուններն արդեն լսվում էին տղային շատ մոտիկ...

— Փրկեցեք տղային, փրկեցեք, հիմա կճզմանի,— բղավեց մի կին ու դեմ հանդիման վազեց սլացող ձիուն... վոստիկանն ավելի ամուր խթանեց ձիուն...

Ցավից կատաղած ձին խելահեղորեն առաջ նետվեց և յերկաթե սմբակների տակն առնելով գանգրահեր տղային, նրան ճխլեց փողոցի քարերի վրա...

— Ա՛հ,— լսվեց մի աղեկտուր ճիչ ու ամեն ինչ խլացավ աղմուկի և մեռնողի շուրջը գոյացած արյան մեջ...

Տեսավ տղայի մայրը, տեսավ ու վշտից սկսեց պոկել մազերը... Նա վազեց դեպի ձիավորը, բռնեց ձիու սանձից և ձեռքի քարով ամուր հարվածեց վոստիկանի գանգին: Վոստիկանը յերերաց թամբի վրա և ցած գլորվելով ձիու վրայից, զարկվեց փողոցի սալահատակին ու փչեց շունչը...

Տղայի մայրը մի «ոխայ» կանչելով, կռացավ գետնին և գրկեց տղայի ջախջախված գլուխը...

Ծառս յեղավ մեռնող վոստիկանի ձին և թռավ մի կողմ: Նրա բացած անցը սլացավ մի նոր ձիավոր և վոտքերի տակ տրորեց զանգրահեր տղայի մորը:

Նա վոչ ճչաց և վոչ ել լաց յեղավ...

Նա մեռավ գրկած վորդուն, ձեռքերն ամուր սեղմած՝ ասես նրանց մեջ բռնած լիներ՝

—Ռոտ ֆրոնտ— խոսքերը...

Արյունոտ հաշվեհարդարն արդեն վերջացած եր...

Մարդիկ ցրվեցին ու դատարկվեցին փողոցները...

Տիրեց ծանր, կոշմարային լռություն:

* * *

Եմիլյան զարթնեց և բացեց պատուհանը: Թարմ օդը ներխուժեց ներս և տեղից շարժեց սեղանի վրա դրված թղթերը:

Նա նայեց դուրս և տեսավ իր յերգերն ընթերցող մարդկանց բազմությունը, վորոնց ծեծելով ցրում եյին վոստիկանները:

— Թող նրանց մեջ վառվի Հայնեյի վոգին.—Բացականչեց Եմիլյան և փակելով լուսամուտը, նորից նստեց գրասեղանի առաջ ու սկսեց ստեղծագործել նոր վոգևորությամբ:

Մինչ նա մոմի դեղնավուն լույսի տակ խորասուզված գրում եր, չնկատեց յերկու ստվերներ, վորոնք անցնելով պատուհանի տակով շշնջացին իրար ականջի.

— Կասկածելի աղջիկ ե, արդեն տեղեկություններ կան,— ասաց նրանցից առաջինը և չիլ աչքերով նայեց ընկերոջը:

— Այո, դա փաստ ե, պետք ե կաշառել տան տիրոջը և հետևել նրա յուրաքանչյուր քայլին,— ասաց յերկրորդը և ժպտաց ցանցառ բեխի տակ...

Դեհ, շտապենք.— ասացին նրանք ու թաղնվեցին մառախլայքում...

Եմիլյան հագնելով վերարկուն, պատրաստվեց գնալու...

* * *

Գեստապոյի շեֆ Ադլերը կառավարությունից հրջում եր դահլիճում և ատամների տակ ծամում ծխախոտի գլանակը: Հետո նա մոտենալով սեղանին, վոտքով հետ հրեց աթոռը, ատամներով կտրեց ծխախոտի ծայրը և գցեց մի կողմ...

Սենյակում կանգնած մարդիկ յերկչոտությամբ նայեցին Ադլերի



քացախ խմած դեմքին և սարսափից ներս քաշեցին ուսերը:

Ադլերը նորից ծամեց ծխախոտը, կտրեց ատամներով, թքեց մի կողմ և գոռաց՝

— Ինձ հարկավոր ե բանաստեղծուհուն բռնել և վոչ թե նրա նոր բանաստեղծությունները:

—Դժվար ե այդ...

Ադլերը չթողեց, վոր լրտեսական ջոկատի պետը վերջացնի իր խոսքերը.— նա մտրակով ամուր հարվածեց նրա մեջքին և ասաց՝

— Կկախվեք բոլորդ ել, յեթե վաղը չբռնեք բանաստեղծուհուն...

Նա վոլորեց բեխերը, մի քանի անգամ անց ու դարձ արավ սենյակում, հետո մոտեցավ սեղանին, քաշեց դարակը և այնտեղից հանելով ինչ-վոր թղթեր տվեց առջևում կանգնած լրտեսին...

Լրտեսը դուրս յելավ, ձեռքի բռնած թուղթը ծալելով...

* * *

Յերեկոն արդեն թանձրացել եր քաղաքի վրա, յերբ Եմիլյան բացեց դուռը և դուրս յելավ սենյակից: Նա անցավ բակով և շենքի հակառակ կողմից յելնելով փողոց արագացրեց քայլերը:

Յերկու հոգի կամաց սողացին թփերի միջից և հետևեցին նրան...

Եմիլյան գնում եր ծուռ ու մութ փողոցներով: Քայլում եր նա ու խորհում ապագայի մասին:

Ու ապագան պատկերանում եր նրան վորպես մի աննման աշխարհ, ուր մարդկանց կյանքը լուսավորված ե մարքսիզմի վառ շողերով...

Մի աշխարհ, ուր կյանքը հորդում ե արևից ել վառ ու գիշերները վառվող բենգալյան հազարավոր լույսերի միջից հայրաբար ժպտում են Լենինի, Ստալինի դեմքերը...

Տարված մտքերով, Եմիլյան չնկատեց, թե ինչպես դուրս յեկավ քաղաքից ու մոտենում ե փոքրիկ անտառին... Նա նայեց իր շրջապատը և տեսավ յերկու գլուխներ, վորոնք անմիջապես թաղնվեցին թփուտներում...

Նրա համար ամեն ինչ պարզ եր: Լրտեսները գտել եյին հետքը:

«Պետք ե խաբել, հակառակ դեպքում կարող են տոպրակն ել հայտնաբերել»,— մտածեց Եմիլյան ու թեքվելով անտառից դեպի ձախ, քայլեց յերկար և մոտենալով քաղաքին արագացրեց քայլերը...

Լրտեսները դուրս գալով թաքստոցից հետևեցին նրան...

Նա անցավ խաչաձևվող փողոցներով և կորցրեց հետքերը:

Էմիլիան մտավ այն փողոցը, վորտեղ առավոտյան տեղի էր ու-
նեցել գեստապոյի կազմակերպած արյունոտ խրախճանքը...
Նա քայլեց առաջ ու տեսավ վեր բարձրացված յերկու սեղմը-
ված բռունցքներ...

Մոտեցավ նրանց... ու սարսափահար կանգ առավ... նրա աչքե-
րի առաջ ընկած էին կարմիր արյան մեջ շաղախված մոր և վորդու
անշնչացած դիակները...

Էմիլիան զգում էր, վոր սեղմվում է կոկորդը և ինչ-վոր բան
այրում է կուրծքը...

Նա ուզում էր բղավել, բայց չէր կարողանում, մաղձն ասես խեղ-
դում էր նրան...

Նա կռացավ, բացեց գանգրահեր տղայի սեղմած բռունցքը և այն-
տեղից հանեց թղթի ճմրթված կտորներ... բացեց ու կարդաց՝

— Մահ ֆաշիզմին...

Դրանք իր բանաստեղծության վերջին տողերն էին...

Նա չոքեց գետնի վրա, բարձրացրեց մոր և գանգրահեր տղայի
գլուխները և ամո՛ւր, ամո՛ւր համբուրեց...

Նրա աչքերից հոսող արցունքի կաթիլներր թրջեցին տղայի սև
գանգուրները:

Նա վեր կացավ ու անհուն վրեժի ցասումը կրծքում շտապեց
տուն...

Խորունկ գիշեր էր:

Բայց նա չկարողացավ վոչ քնել և վոչ է՛լ հանգստանալ...

Նրա աչքերի առաջ շարունակ գանգրահեր տղայի արյունաշաղախ,
ջախջախված գլուխն էր ու սեղմված բռունցքը՝ մատների արանքում
թղթի կտորը, վորի ծայրի վրա պարզ յերեվում էր՝

— Մահ ֆաշիզմին:

Էմիլիան վեր կացավ տեղից ու նորից նստեց գրասեղանի առաջ.
հետո վերցնելով գրիչը, սկսեց գրել գանգրահեր տղայի ու նրա մոր
յեղեռնական մահվան մասին...

Իսկ յերբ վերջացրեց, վեր կացավ շշնջալով՝

— Հարկավոր է տպարան հասցնել...

Նա բացեց պատուհանը և նայեց դուրս:

Նրա սրատես աչքերը կանգ առան յերկու ստվերների վրա, վո-
րոնք կարճանալով անհայտացան մոտակայքում...

Էմիլիան ջղայնացած, ամուր գոցեց պատուհանը և նստելով աթո-
ռին, գլուխն առավ ափերի մեջ:



... փորձեց փակել աչքերը, բայց չկարողացավ, գանգրահեր տղայի
արյունաշաղախ գլուխը նորից կենդանացավ նրա աչքերի առաջ...
Նա բացեց աչքերը և վերցնելով սեղանի վրա դրված գիրքը կար-
դաց Հայնեյի խոսքերը՝

Ամոթ, կեղծ ու սուտ հայրենիք և քեզ,
Ամոթանքի ու գարշության կրկես,
Ուր ամեն ծաղիկ վաղ է թառամում,
Ուր վոճիրն ու ծուլությունն է սնվում

. . . . . . . . . . . . . .

Գերմանիա, մենք քեզ պատան ենք գործում,
Թունոտ ու քինոտ անեծքով լցուն, գործում ենք, գործում...

Էմիլիան պայթույթից ցած գցեց գիրքը և գլուխն առավ ափերի
մեջ: Նրա աչքերից գլորվեցին արցունքի կաթիլները և թրջեցին գրքի
տողերը... Հետո նա բարձրացնելով գլուխը, դուրս նայեց պատուհա-
նից և շշնջաց՝

— Ո՛հ, Հայնե, Հայնե, գերմանական ժողովրդի դու հարազատ
բանաստեղծ, այս ինչ որի հասավ քո սիրած ժողովուրդը. Փաշիզմի
կեղծ ու սուտ հայրենիքում, ուր ամեն մի ծաղիկ դեռ չբողբոջած,
ճռշնում, մեռնում է անհետ...

Նա մի պահ կանգ առավ, հայացքը հետ դարձրեց պատուհանից,
նորից կարդաց Հայնեյի տողերը և շարունակեց՝

— Ամոթանքի ու գարշության կրկես — ահա թե ուր հասցրեց
ֆաշիզմը Հայնեյի սիրած Գերմանիան...

Բարկությունից դողում էր վոչ միայն նրա ձայնը, այլև ամբողջ
մարմինը...

Լսում էր նա, ու նրա կերկերուն ձայնի հետ պայթույթից աչքերից
գլորվում էին արցունքի կաթիլները և թրջում գրքի տողերը...

Նա ծալեց գիրքը, թաշկինակով սրբեց այտերի վրա լցված ար-
ցունքի ցողերը, նախատեց իրեն՝ թուլության համար և սեղանի վրա-
յից վերցնելով բանաստեղծությունները՝ քայլեց դեպի դուռը՝

— Գերմանիան պետք է իր դեմքից սրբի ամոթանքի ու գարշու-
թյան կնիքը — դրան չեմ քին ասաց Էմիլիան ու դուրս ելավ...

Գիշեր էր, անթափանց գիշեր: Յերկնքում աստղերն էին առ-
կայծում թույլ լույսով, իսկ փողոցներում՝ ճղուտած լապտերները:
Էմիլիան մտավ բակ և ապա շունչ քաշեց: Մեղմ քամին օրորե-

քով նրա վարսերը դցում եր աչքերին: Նա ձեռքով հետ տարավ վարսերը և նայելով յերկինքին՝ շշնջաց՝

— Ո՛հ, ինչ լավ է ազատ լինել, ո՛հ, ինչ լավ է յերգել ու պայքարել ազատության համար:

Նա արագացրեց քայլերը և մոտենալով դարբասին՝ նայեց շուրջը: Ոչ ոք չկար: Լապտերների հետքը չեր նկատվում:

«Պետք է շտապել»— մտածեց Եմիլիան և բացեց դուռը:

Նա նոր եր ոտքը դռնից դուրս դրել, յերբ յերկու սպերներ արագորեն դուրս թռան պատի տակից և մի մեշոկ անցկացնելով Եմիլիայի գլուխը, գրկեցին և անհայտացան գիշերվա մթության մեջ…

* * *

— Թռչունն այժմ վանդակումն է,— հեգնորեն ասաց Ադլերը և ոտքից մինչև գլուխ չափելով ավջեվում կանգնած կալանավորուհուն, շարունակեց, —

Գիտե՞ք, վոր Ձեզ կախաղան է սպասում:

— Միևնույն է թե ինչ…

— Դեռ համդգնո՞ւմ եք…

— Ինչպես կհասկանաք…

Ադլերը կատաղեց նրա նոր համդուգն պատասխանի համար և բարձրանալով նստած տեղից, սեղանի վրայից վերցրեց ատրճանակը և ուղղեց նրա քունքին…

— Ձեզ մահ է սպառնում, իմացեք այդ…

— Ուրիշ բան Ձեզանից յես չեմ ակնկալում.

— Դուք կմեռնեք անշուք, անխառուճակ ու անհիշատակ…

— Բայց իմ յերգը միշտ վառ կմնա ու հուրը կբորբոքի մարդկանց սրտերում…

Ադլերն ավելի յե կատաղում,— նա ուզում է քաշել ատրճանակի ձգանը, բայց զսպում է իրեն և փոխելով խոսակցության տոնն ասում է՝

— Սակայն մտածեցեք, ինչո՞ւ մեռնել, յերբ կարող եք ապրել փառքով, լավ կյանքով.

— Ձեզ չեմ հասկանում,— ասում է Եմիլիան և նայում շուրջը:

Ադլերն ավելի յե մոտենում, ցած է իջեցնում ատրճանակի փողը և կեղծ փաղաքշանքով ասում ավելի կամաց՝

— Դուք նշանավոր բանաստեղծուհի յեք, դա դաղանիք չէ մեզ համար: Ցեվ յեթե Ձեր տաղանդն ի սպաս դնեք մեզ համար, այն ժամ դուք կունենաք փառք, փող, միլլիոններ… միայն թե գրեցեք մի դեկլարացիա… վերջացրեց Ադլերը և Եմիլիային մեկնեց թուղթ ու գրիչ…

Եմիլիան ցնծացավ, զայրույթով և նողկանքով նայելով գեստապոյի շեֆ Ադլերի պարարտ դեմքին, ամուր հետ մղեց նրա ձեռքն ու ասաց բարձրաձայն՝

— Դավաճան դարձնել, այդ Ձեզ չի հաջողվի…

Անհաջողությունից փխրած Ադլերը նորից վերցրեց ատրճանակը և դնդակը ավեց փողի մեջ…

Եմիլիան ուշադրություն անգամ չդարձնելով այդ գործողության վրա շարունակեց՝

— Ֆաշիզմը տաղանդների թշնամին է, նա վոչնչացնում, մեռցնում է գիտությունը, արվեստը, տաղանդները… Նա կանգ առավ մի պահ, խորասուզվեց մտքերի մեջ և ասաց ավելի բարձրաձայն.—

— Ո՛, դեռ յերեկ եր, վոր կապույտ շալիկավորները փշուր—փշուր արին յերգի արքա Հայնեյի մարմարե արձանը և փողոց նետեցին նրա փշրանքները… Ո՛հ, դեռ յերեկ եր, վոր բարբարոս խարույկի մեջ այրեցին գիտության մարգարեների, բանաստեղծներ Պուշկինի, Հայնեյի գրքերը… Ու մոխրացող կրակների միջից սաես բարձրանում է նրանց մտքի և յերգերի տողերն ու բոցկլտում աչքերիս առաջ… Նրանք միշտ գերմանական ժողովրդի մեջ վառ կպահեն վրեժի ու ցասման հուրը… Ահա իմ սիրտը, խփեցե՛ք նա այլևս հարկավոր չե՛, յեթե ձեր գնդանում պետք է դադարի ազատության յերգը յերգելուց…

Վերջացնելով իր ասելիքը, Եմիլիան բացեց կուրծքը և փակեց աչքերը…

Ու այդ պահին նրա աչքերի առաջ պատկերացան դանդրահեր տղայի ու նրա մոր արյունաշաղախ գլուխները…

— Քեզ գնդակահարելը քիչ է,— կատաղությունից բղավեց Ադլերը և Եմիլիայի քունքի վրայից հետ քաշելով ատրճանակը, սեղմեց կոճակը:

Ճրխկալով բացվեցին դռները և ծանր քայլերով ներս մտավ սև շորեր հագած դահիճը:

Ադլերի նշանի վրա դահիճը մոտեցավ Եմիլիային…

— Վերջին անգամ ասում եմ, լավ մտածեցեք, յեթե հրաժարվեք,

կհրամայեմ դահճին պատռել Ձեր կուրծքը, այնտեղից հանել ձեր սիրտը և շների բերանը գցել— ասաց Ադլերը և գլխով արավ դահճին...

Դահիճը բարձրացրեց դանակը:

Տիրեց լռություն:

Ադլերը նորից կրկնեց իր խոսքերը:

Էմիլիան բացասաբար շարժեց գլուխը:

Ադլերը նոր նշան արավ դահճին:

Դահիճը ցած իջեցրեց վեր բարձրացրած դանակը և նրա սուր ծայրը հպեց Էմիլիայի կրծքին...

Դուրս ցայտեց արյան բարակ շիթը և ներկեց դահճի շորերը...

— Դարձյա՞լ հրաժարվում եք,— կրճտացնելով ատամները, խուլ մռնչաց Ադլերը և մոտեցավ Էմիլիային...

— Իմ ասելիքը, ես արդեն ասել եմ,— պատասխանեց Էմիլիան և չնայած կրծքի ցավին, հպարտորեն ավելի վեր բարձրացրեց գլուխը...

Գեստապոյի շեֆ Ադլերը հետ քաշվեց և մոտենալով դահճին տըվեց հրամանը:

Դահիճը սեղմելով ատամները, նորից մոտեցավ Էմիլիային և դանակը մինչև բռնակը խրեց նրա կրծքի մեջ...

Դուրս հորդեց կարմիր արյունը և ներկեց դահճի ձեռքերը...

Էմիլիան շրմփալեն ընկավ հատակի վրա, ձայնելով՝

— Բայց իմ յերգը, յերբեք չի լռի...

Դա յեղավ նրա վերջին ճիչը...

Դահիճը չոքեց Էմիլիայի մոտ, դանակով կտրեց նրա կողերը և դուրս հանելով աղջկա սիրտը, մեկնեց Ադլերին:

Գեստապոյի շեֆ Ադլերը վերցրեց դեռ բաբախյունը չդադարած սիրտը և շուռ տվեց ձեռքերի մեջ: Ծորացող արյունը ներկեց նրա թեր ես հազար անգամ ներկված ձեռքերը...

Հետո բացելով պատուհանը, նա աղջկա սիրտը նետեց փողոց՝ հեռվից ցինիկաբար քրքջալով՝

— Այժմ այնտեղ լավ կհնչի քո յերգը... Հա՛, հա՛, հա՛...

Բանաստեղծուհու սիրտը գլորվելով տրամվայի ռելսերին, թռավ մի կողմ և ընկավ քարերի վրա...



Քիչ հետո փողոցով դղրդալով անցավ մի կառք և աղջկա սիրտն առավ անիվների տակ:

Սիրտը ճզմվեց անիվների տակ, բաժանվեց մասերի և հանգավ, իր չորս կողմն արձակելով լուսավոր, փառավոր կայծեր, որոնց մեջ առավել բարձր ու հուժկու յեր հնչում Էմիլիայի խոսքերը՝

— Բայց իմ յերգը, յերբեք չի լռի...

# ԳՈԼՈՐՇԻՆԵՐ

Գեստապոն, նշանավոր գիտնական Հերդերին փակելով ամուր զնդանում, յերկար ժամանակ փորձում էր վերափոխել նրան և դարձնել ֆաշիզմի հլու—հնազանդ գործիք: Սակայն գեստապոյի գործադրած բոլոր միջոցներն իզուր անցան: Վոչ տանջանքը և վոչ էլ խոստումները չը կարողացան ընկճել գիտնականի արի հոգին:

— Ձեր գիտությունը ծառայեցրեք ռասսայականությանը, այն ժամանակ դուք ազատ և հարուստ կլինեք, ամեն անգամ ասում էյին Հերդերին, նրան •հարցաքննության տանելիս:

Մեկ անգամ էլ, յերբ Հերդերին նորից հարցաքննության տարան, նա ուղղակի ասաց՝ «Ավելորդ են ձեր փորձերն ընդմիշտ: Յես ծերացել եմ Ֆիզիկայի հետ միաժամանակ փիլիսոփայությունն ու պատմությունն ուսումնասիրելուց: Պատմության զարգացման օրինաչափությունը ցույց է տալիս, վոր մարդու վերջնական ուղին—կոմունիզմն է...»:

Գեստապոյի քննիչը կատաղելով ծերունի գիտնականի ուղղախոսության վրա, ներս կանչեց մի դրոհայինի, հրամայեց մերկացնել նրան, ծեծել և տանել բաղնիք...

— Թող բաղնիքում մաքրվի, շատ է կեղտոտվել: Թող աշխարհն իմանա, վոր մենք մաքուր ենք պահում կալանավորներին...— Նրանց գնալու ժամանակ ասաց քննիչը և հռհռաց անամոթաբար...

* * *

Փոքրիկ խցիկում նստած թանձր գոլորշին թույլ չտվեց Հերդերին իր շրջապատը տեսնելու, բացի լպրծուն հեղուկի առկայությունից, վոր նա զգում էր վոտքերի տակ և պատերին ձեռքով շոշափելիս:



...Յերկար ժամանակ խարխափելով խավարում. նա փնտրում էր ջրի ծորակը, վորպեսզի կարողանա հանգստություն տալ ծեծից ջարդված մարմնին: Բայց իզուր, այդպիսին չկար ու չկար: Հանկարծ առաստաղի վրա վառվեց ելեքտրական լամպը և լուսավորեց խցիկը: Հերդերը տեսավ մամռակալած, գաղջ հոտ փչող պատերը, վորոնք ասես իրենց լպրծուն տեսքով վկայում էյին բազմաթիվ վոճրագործությունների մասին: Մի քիչ այն կողմ, դռան մոտիկ անկյունում, նա նկատեց ինչ վոր մարմին. մոտեցավ և սոսկումից բռնեց գլուխը: Մի պահ փակեց աչքերը, հետո բացելով, պարզ տեսավ մեռած մարդու ուռած մարմինը և այլանդակված դեմքը... Կռացավ, նայեց մեռելի դիմագծերին, ճանաչեց և ճչաց վշտից՝ «Կա՛րլ, Կա՛րլ, այսպես է գեստապոն բաղնիքում լողացրել քեզ»: Նա բռնեց գլուխը և փակեց աչքերը...

Կարլը, Հերդերի յերիտասարդ, ամենաարի ու խելացի ազնական կոմյերիտական գիտնականներից էր...

Նա քիչ հետո բացելով աչքերը, հետ դարձավ, մոտեցավ դռանը և հարվածեց ամուր:

Պատասխանի փոխարեն դռան հետևից լսվեց մի խռպոտ ձայն և նորից մարեց լույսը:

Խցիկում տիրեց խավար:

Հերդերը կպած դռանը, անընդհատ հարվածում էր նրան:

Հանկարծ չորս կողմից պատասխանի փոխարեն լսվեցին խշշոցներ. և տաք գոլորշին դուրս ցայտելով պատերի վրա յեղած ծակոտիներից, թանձրացավ փոքրիկ խցիկում: Ցայտող տաք գոլորշին շոշափելով Հերդերի մարմինը, սկզբում դուրեկան թվաց նրան, ասես նրանք թեթևացնում էյին մարմնի վրա յեղած ջարդվածքներից առաջացող ցավը:

Բայց գնալով թանձրանում էր գոլորշին, տաքացնում խցիկը և առաջացնում գաղջ հոտ...

Թանձր, տաք գոլորշու մեջ դժվարանում էր Հերդերի շնչառությունը: Նրա սիրտը խփում էր արագ–արագ: Դժվարությամբ շարժվելով առաջ, նա մերթ կպչում էր այս պատին, մերթ այն պատին ու հաճախ էլ սահելով ընկնում էր լպրծուն հատակի վրա: Հերդերն ընկնելով հատակի վրա մեծ դժվարությամբ սողաց առաջ, գտավ դուռը, հարվածեց ու կանչեց:

Վոչ մի ձայն չկար:

Հարվածներից թուլանալով նրա ձեռքերը, ընկան հատակի վրա...

Անցավ մի քանի րոպե, նա հավաքելով ուժերը նորից բարձրացրեց թուլացած ձեռքերը և հարվածեց դռանը: Դռան յետևից լսվեց մի կարճ և կոպիտ ձայն:

— Ի՞նչ եք ուզում:

— Բաց արեք, դահիճներ:

— Լռել, հրամայված է գիտությունը զարգացնելու համար մաքրվել բաղնիքում,— ցինիկաբար ասաց բանտապահը և գնաց:

Հերդերը պարզ լսեց հեռացող ոտքերի ձայնը, որը գնալով դարձավ անլսելի:

Գոլորշին թանձրանում էր ու թանձրանում:

Ուժասպառ յեղած Հերդերը հազիվ-հազ շնչում էր: Մի անտեսանելի գունդ ասես մտնում էր կոկորդին և ուզում էր դուրս թռչել բերանից: Որքան ցանկանում էր փակել ինքնաբերաբար բացվող բերանը, չէր կարողանում: Հեղձուկը խեղդելով կոկորդը, միշտ բաց էր պահում նրա բերանը: Իսկ թանձր, տաք, գարշահոտությունով հագեցած գոլորշին ներս էր խուժում նրա բաց բերանով և ճնշում թոքերն ու սիրտը: Հերդերը մեծ դժվարությամբ նորից բարձրացրեց ձեռքերը և ուզեցավ հարվածել դռանը, բայց դավաճանեցին ուժերը և նրանք չրմփալեն ընկան խցիկի սալահատակի վրա...

Իսկ գոլորշին շարունակում էր թանձրանալ խցիկում...

Գնալով ավելի ու ավելի թուլացավ Հերդերի սրտի բաբախումը...

Լսվեց մի խռռոց և ամեն ինչ լռեց գոլորշու խիտ կաթիլներով հագեցած մութ խցիկում...

Հերդերը մեռավ... Նրա շուրթերի վրա ասես սառած լինեյին՝ «ֆաշիզմը գիտության թշնամին է» բառերը:

* * *

Մի ժամ հետո գրոհայինը զեկուցեց գեստապոյի քննիչին, որ գիտնականը լավ լողացել է: Քննիչը վոլորեց բեխերը, ժպտաց ինքնագոհ և քրթմնջաց կարմրակալած քթի տակ և ասաց.

—«Հրաշալի բաղնիք է գիտության և գիտնականների համար»: Հետո վերցնելով մի թուղթ ծուռ, տափակ գրերով գրեց՝ «Հայտարարել մամուլում, որ գիտնական Հերդերն ունենալով սրտի լայնացում, ստացավ կաթված այն պահին, յերբ լողանում էր բաղնիքում...»:

Գրոհայինը դուրս յեկավ և շտապեց խմբագրատուն: Իսկ բանտապահը փակելով «բաղնիքի» գոլորշու ծորակները, ներս էր հրում մի նոր կալանավորի՝ հրեա բանվոր Մորիսին...



# ԱՐԴՅՈ՞Ք ԽԵԼԱԳԱՐ ԵՐ

Այդ պատահեց 1919 թվին...

Ահա յես թերթում եմ հիշողության թերթերը և աչքիս առաջ բարձրանում է նրա նուրբ ու նիհար հասակը...

Նա դեռ կարծես կանգնած է այնտեղ, գլուխը տարտամորեն թեքած, խոշտանգված ու վերջին ծվենները վրան կախված...

Յես նայում եմ նրա խամրած աչքերին և այնտեղ կարդում մայրական վիշտը...

Ծավալվում է վիշտը, նստում նրա դալուկ դեմքին, սեղմվում են ատամները և վիշտը փոխվում է լուռ ցավի...

Ո՛հ, յես յերբեք չեմ կարող մոռանալ այն սրտաշարժ տեսարանը, որին ականատես յեղա...

* * *

Վարդանլու գյուղի աշունը, որ իջավ խուլ անտառից, փոխեց նրա կերպարանքը: Հետո նա գույնզգույն՝ պար բռնեց անտառի վրա և արշավեց դաշտերը...

Արևը, յերբ վառվեց արևմուտքում, կապտեց անտառը, իջավ մութը և ծածկեց անտառի յերփներանգությունը...

Յեվ յերբ արևն իր վերջին շողերից զրկում էր բարձր ճյուղապատ լեռների կատարները, և յերբ ուռենիները սվսվալով նազանքով թեքում էին իրենց գլուխները հոսող ջրերի վրա, այն ժամանակ դադար էյինք տալիս մեր մանկական խաղերին, որ խաղում էյինք գետակի ավին կամ աթարի դեզերի տակ...

Այսպես շարունակվում էր ամեն օր...

Յեվ այդ օրերից մեկն էր:

Յես նոր եյի վերադարձել դետակի ափից, ուր ամբողջ օրը փայտե ձիու վրա խաղում եյի:

Մանկական հպարտությամբ մոտեցա մեր տանը (վորը մի կիսավեր խրճիթ եր), փայտե ձիս դրի շվաքում և ներս մտա տուն՝ բարձր ձայնով կանչելով.

— Մայրի՛կ, քաղցած եմ:

Մայրս, վոր մի բարի ու հեզահամբյուր կին եր, մոտեցավ, նախ կշտամբեց, ապա համբուրելով ճակատս, կռացավ թոնրի վրա, այնտեղից հանեց կավե կճուճով մի աման թանապուր և դառնալով ինձ ասաց.

— Արի կեր, քո գլխին ու արևին մեռնեմ, իմ ումրը ու արև...

Ո՛, յես սիրում եյի նրան. նա շատ սրտաշարժ պատմություններ եր անում, վորոնք դեռ այսոր ել հիշում եմ: Նրանք հուզում, փոթորկում եյին մանկական հոգիս. յես լաց եյի լինում, գլորվում եյին աչքերիցս արցունքի շիթերը և ընկնում մեր խրճիթի խոնավ հատակին...

Նա պատմում եր Սիամանթոյի, Խջեզարեյի, Մամեյի ու Աշեյի, արյունարբու աղաների ու դաշնակների մասին:

Նրանք դեռ վաղ մանկությունից իմ մեջ սերմանում եյին մի անզուսպ ատելություն դեպի այն ամենը, ինչ բանի յեր, ինչ աղայական եր...

Փայտե մեծ գդալով ուտում եյի թանապուրը, յերբ լսեցի ձիերի խրխինջ ու սմբակների դոփյուն: Մանկական հետաքրքրությունս բորբոքվեց. ճաշս կիսատ թողի և թանապրոտ կրծքով դուրս վազեցի: Արևը մայր եր մտել արդեն: Դիմացի ծառերը թեքել եյին գլուխները. գյուղն եր մտնում ցաք ու ցրիվ նախիրը, հետևից թողնելով նոսր փոշի...

Շվաքում ձիերը բռնած կանգնած եր զինված մարդկանց մի խումբ, իսկ մի քիչ հեռու, մեր հարևան Եմմայի տան դռան մոտ հայտնի Յապոնն եր և տանուտեր Ոհանը:

Նա յեկավ սև մրրիկի նման: Սրբեց դուռ ու կտուր, մտավ ոճորքների տակ, լիզեց ամեն ինչ, հետո բարձրացավ հաշտը և այնտեղ ել սարքեց արյունոտ խրախճանք...

Խմբապետը մոտեցավ դռանը: Դուռը փակ եր: Ոհանն ամուր հարվածեց: Թնդաց յերդիկը, հողը ցած հոսեց ոճորքից ու թափվեց ցած. Վախեցած դուրս թռավ բնից ծիծեռնակը և սրընթաց ճեղքեց ոդը...



Իսկ Եմման ընդհանուր աղմուկի մեջ չլսեց դռան բախումը: Նա նստած յերեխայի որորոցի մոտ՝ յերգում եր.

Նանա՛, նանա՛, ա՛յ բալա
Նանա անուշ, ի՛մ բալա:
Քամին կգա, կորորի
Պախրեն կգա, ծիծ կտա...

— Բաց արա դուռը, գավառից մարդ ա յեկել,— կատաղած բղավեց Ոհանը և կրկնեց հարվածը...

Քյոխվայի ձայնից Եմմայի սրտում ահ ընկավ: Ինչո՞ւ յեն յեկել նրանք, ի՞նչ մարդիկ են, և ի՞նչ են ուզում այս ուշ ժամին: Հարց եր տալիս իրեն Եմման և ջանք թափում գտնել դրանց պատասխանը:

Սակայն նա յերկար ժամանակ չուներ խորհելու: Բայց մի բան ակնհայտ եր. նրա կանացի սիրտն զգում, գուշակում եր, վոր մի փորձանք է գալու իրենց գլխին, բայց ի՞նչպես, ի՞նչ ձևով, այդ նա չեր կարողանում վորոշել:

Այսպիսի մտքերով նա մոտեցավ դռանը: Բանալին պտտվեց դռան անցքի մեջ...

Շեմքում յերևաց նա՝ շալը ուսին: Բարձրահասակ եր, յերկար վարսերը գլուխը զարդարելով՝ իջնում եյին մինչև գոտկատեղը: Դալուկ եր դեմքը, սակայն վառվռուն եյին աչքերը, աչքեր, վորոնք լի եյին մայրական ջերմ սիրով, աչքեր, վորոնք ընդունակություն ունեյին թափանցելու դիմացինի հոգու խորքերը և հասկանալու նրա եյությունը:

Շալը, վոր կախ եր ընկել, Եմման նորից դցեց ուսին և դիմեց նրանց.

— Ի՞նչ եք ուզում:

Պատասխանի փոխարեն Յապոնը գլխով արավ տղերքին, հետո չրխկացին մտրակները և ներս խուժեցին...

Տակն ու վրա արին սենյակը, քրքրեցին ու նայեցին բոլոր անկյունները, հետո յելան կտուրը, վայր իջան ու նորից մտան տուն:

* * *

Սենյակում լսվեց յերեխայի լացի ձայն:

Եմման հետ դարձավ և ուզում եր տուն մտնել. բայց Ոհանը հետ քաշեց նրան ու գոռաց.

— Վո՞րտեղ է բոլշևիկ մարդը:

— Չգիտեմ,— կարուկ ասաց նա:

Խմբապետը, վորը կանգնած էր հեռվում, մոտեցավ նրան ու՝

— Ես կողմ արի և շուտ ասա բոլշևիկի մարդու տեղը, թե չէ մաուզերը կդատարկեմ եդ սիրուն ճակատդ:

Տիրեց լռություն:

Կատաղությունը փրփրեց ու նստեց նրանց շուրթերին:

Սպառնալիքը վորոտաց օդի մեջ: Ծուխ արձրացավ և վառոդի հոտը տարածվեց շուրջը... Աղբանոցի վրայից հուշտ յեղան ճնճղուկները և ճռվողելով թռան ու նստեցին դիմացի ծառերի վրա...

Սակայն նա մնաց անդրդվելի:

Զայրույթը, վոր անզորի արդարության միակ ապավենն է, բողոքեց նրա կրծքի տակ:

— Միևնույն է, վոչինչ չեք իմանա, թողեք և հեռացեք. այս ուշ ժամին դուք իրավունք չունեք խանգարելու մարդկանց հանգիստը:

«Իրավունք» ու «հանգիստ» բառերը, վոր հեգնորեն կրկնվեցին նրանց բերաններում, փոխվեցին մտրակների հարվածների...

Եմման, վոր վայր էր ընկել, ցավատանջորեն գալարվում էր հարվածների տակ, վորոնց յուրաքանչյուրի հետ խմբապետ Յապոնը կրկնում էր՝ «հիմա կասես, հիմա կասես...»

Սակայն, ահա Յապոնը դադարեցրեց ծեծը և դառնալով զինվորներին հրամայեց ներս տանել Եմմային:

Նրա գլխում ծագել էր մի անասնական, դիվային միտք...

* * *

Տան մեջ, անկյունում, թույլ բոցով վառվում էր ճրագը, իսկ թախտի վրա մուշ-մուշ քնած էր նրա միակ զավակը, յերկու տարեկան Սուրիկը... Նրա անմեղ աչերը ճրագի թույլ լույսի տակ դեղնավուն գույն էին ստացել. ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ գրավիչ էին նրանք...

Լուսնի շողը, վոր նետի նման կախվել էր յերդիկից, ցոլքն ուղիղ գցել էր թոնրի մեջ ու փայլ տվել մոխրացող աթարի կրակին...

Յապոնի անասնական կրքերը դառնում էին սանձարձակ: Նա մոտեցավ Եմմային և աչքով արավ տանուտերին...

Ճրագը հանգավ: Սենյակում տիրեց խորին խավար:



Ապտակը, վոր չեշտակի իջավ Յապոնի դեմքին, մթության մեջ մնաց անտեսանելի: Քիչ հետո լսվեց դռան ամուր հարվածը: Եմման, օգտվելով մթությունից, բացեց դուռը, վոր փախչի, սակայն տանուտերը բռնեց նրան. ներսում բարձրացավ լացի ձայն և յերեխայի ճղավոց...

— Դու ո՞ւմ ես խփում, —բղավելով դուրս յեկավ Յապոնն ու տրաքեց մաուզերը... Հարվածը վրիպեց: Սակայն ծեծը, վոր հաջորդեց կրակոցին, Եմմային հասցրեց ուշաթափության...

* * *

Սուրիկը քնից զարթնելով՝ շարունակում էր լաց լինել՝ մամա՛, մամա՛ կանչելով...

Սակայն նրան վոչ վոք չէր պատասխանում, վոչ վոք չէր արձագանքում նրա ձայնին...

Լալիս ու լալիս էր նա...

Թախտի վրայով Սուրիկն սկսեց բերանքսիվայր սողալ առաջ, սողաց ու... Լսվեց մի աղեկտուր ճիչ և ամեն ինչ մարեց մթության մեջ... Նա զարնվելով թոնրի շուրթին՝ ընկավ նրա մեջ: Բարձրացող փոշին, վոր նստեց սենյակում, քողի պես ծածկեց դեպքը:

Կիսաուշաթափ Եմման լսեց ճիչը, վոր բարձր էր ու զիլ, սրտաճմլիկ ու ազդու.— Նրա մայրական սիրտը հասկացավ յերեխայի վողբերգական վախճանը...

Յեվ, չնայած մարմնի ջարդվածքին, վեր կացավ տեղից ու խելագարի նման իրեն տուն գցեց...

Յերկար ժամանակ նա ձեռքերով խարխափում էր խավարի մեջ, սակայն չէր գտնում յերեխային...

Հանկարծ վազեց նա դեպի թոնիրը, կռացավ նրա վրա ու դուրս հանեց փոշեթաթախ յերեխային, փոշե ցեխը բերանին ծեփված...

Յերեխային մոտեցրեց դեմքին, ականջը դրեց բերանին: Նա այլևս չէր շնչում... Մթության մեջ նա չնկատեց սևացած, փոշեխառն արյունը, վոր յերեխայի գլխից հոսելով, թրջեց կուրծքն ու ձեռները...

Եմման դուրս յեկավ մեռած յերեխան գրկի մեջ: Նրա կրծքից դուրս էին թռչում խուլ և մերթ ընդ մերթ բռնկվող հառաչանքներ... Այդ վրեժի ու մայրական ջերմ սիրո հառաչանքներն էին, վոր խեղդում էին նրա կոկորդը...

Ում վոր փնտռում եր աչքերով, այլևս չկային.— արյունոտ հարսանիքը սարքելուց, տունը հրդեհելուց հետո հեռացել եյին դաշնակ ճիվաղները:

Հուսահատությունը և անորոշ մտքերը պատռում եյին նրա կուրծքը:

Վերջին մխիթարանքը նա պետք է գտներ վրեժի մեջ, վոր այլևս անզոր եր կատարել: Մինուճար վորդու անշնչացած մարմինը նրան հասցնում եր խելացնորության···

Գթառատ մոր սիրտը վշտից ու անզորությունից փոխվեց խելակորույս մտքի, և նա խելագարի նման ներս վազեց իրեն կրակի բոցերին հանձնելու··· Հարևանները հազիվ դուրս բերին նրան:

Վառվում եր Եմմայի տունը, վերջին ապաստարանը··· մեկն այն հազարավոր օջախներից, վորոնց ծուխը մարում եյին դաշնակ Յապոնները:

* * *

Մի քանի որ հետո գյուղի հասարակության ընդհանուր վրդովմունքի և ճնշման տակ գավառական «դատարանում» լսվեց Եմմայի տան այրման և յերեխայի մահվան գործը···

Նա կանգնած եր «դատարանում» վորպես մեղադրյալ···

Գունատ եր նրա դեմքը, ինչպես կտավը, ավելի գունատ, քան մեռելինը··· Խամրած աչքերի մեջ վրեժի և ատելության անզուսպ կրակն եր բոցկլտում:

Դատը յերկար չտևեց, ընդամենը 15 րոպե, վորից հետո կարդացվեց վորոշումը.

«Յապոնը և Ոհանը վոչ մի մեղք չունեն տան այրման և յերեխայի մահվան մեջ. մեղավոր Եմման ինքն է կատարել այդ հանցագործությունը, վորովհետև նա խելագար է յեղել···»:

Արդյո՞ք խելագար եր····





# ՄԱՐԴԸ ՋՎԱՐԺԱՆՈՒՄ Ե

Ամերիկյան վորբանոցների տեր ու տնօրեն մստր Բիջը ապրում եր Ֆալիզանի № 10 շենքում: Նրա առջևում շքեղ պուրակն եր փռված, իսկ ներսում պարսկական գորգերը: Շքեղությունը ծով եր ու մստր Բիջը լողում եր նրա մեջ···

Ուշ յերեկո յե: Դիմացի ձյունապատ լեռներից վազում է քամին և իջնում սափարակը: Բարձրանում է ձյունն ու կախված լույսի տակ փայլփլում է արծաթի նման···

Միջանցքում գլգլում է ինքնայեռը: Ներսում մստր Բիջը հարդարում է յուղոտ ոճիքը···

Իսկ Լիզան զբաղեցնում է նրա յերեխաներին:

Ո՞վ է նա: Մանկատան սան, գեղեցիկ ու վառվռուն և սևորակ աչքերով մի աղջիկ:

Կառավարչուհի օրիորդ Սաթենիկը նրան ուղարկել է մստր Բիջի տունը, վորպեսզի մինչև յերեկո զբաղեցնի, խաղացնի նրա յերեխաներին և նորից գնա մանկատուն, այնտեղ քնելու:

Այդպես եր ցանկացել մստր Բիջը, ամերիկացի քեռին:

Սակայն Լիզան մանկատուն է վերադառնում ժամը 1-ին, իսկ օրիորդ Սաթենիկը վոչինչ չի ասում, մինչև անգամ հարց չի տալիս թե ինչո՞ւ ուշացար:

Սաթենիկը, այդ գեր, բերանում վոչ մի ատամ չունեցող, մի յերեսը բոլորովին կապտած օրիորդը ինչ չունի է, վոր չհասկանա ամեն ինչ: Նա գիտե բոլորը, բայց ինչի՞ խոսել, չէ վոր կարող է բարկանալ նա, ամերիկացի քեռին ու իրեն զրկի «մի կտոր հացից»:

* * *

Այդ որը մստր Բիջի տրամադրությունը սովորականից բարձր եր: Աչքերի կոպերի ուռուցքն ու կարմրությունը վկայում եյին լավ կոնծելու մասին:

Նա նստեց պարսկական գորգերով սարքված բազկաթոռի վրա,

և յերբ իրիկունը թեթևորեն իջավ յերկրի վրա ու իր մթությունը մաղեց շենքերի կտուրներին, ներսում առկայծեցին լույսերը…

Մասր Բիջը ձեռքով բռնեց ծնոտը, մի քանի անգամ ճպճպացրեց բերանը, հետո մոտեցավ դռանը և ձայնեց.

— Լիզա, քըմհիր…

Լիզան, որ գլխակոր, յերեխաների հետևից քայլում եր միջանցքում, վազելով մոտեցավ նրան: Մասր Բիջը խնկույն հափշտակեց նրա ձեռքը և ներս քաշեց, ապա դուռը կողպելով բանալին դրեց գրպանը: Զարմանքն ու շփոթությունը, որ յերևաց Լիզայի այտերի վրա, քիչ հետո փոխվեց սարսափի… ինչո՞ւ այդպես կրքոտաբար սեղմում է նրա ձեռքը, ինչո՞ւ այդպես արյունակալած աչքերը վախաշատությամբ հառվել են իր վրա, մտածում եր Լիզան և դողում կանգնած տեղը… ոտքերը կարծես չեն հնազանդվում իրեն, ահա նրանք կծալվեն ու ինքը վայր կիկնի…

Մասր Բիջը նրան բռնի քաշում և նստեցնում է կողքին, հետո ձեռքը տանում է թևերի տակով և գրկում աղջկա իրանը: Ճչում է Լիզան, հրում է, որ բարձրանա, բայց իզուր… Սևավական կիրքը, որ մասր Բիջին դարձրել եր անսանձ գազան, մոլեգնեց սենյակում, նա հարձակվեց Լիզայի վրա ու նրան ամուր առավ գրկի մեջ…

Աղջկա անզոր ճիչերը, ձեռքի թափահարումներն ու մարմնի գալարումներն ավելի թուլացրին նրան…

Մասր Բիջը նրան կիսաուշաթափ դրության մեջ թողնելով, բարձրանում է տեղից և սեղմում կոճակը… մարում է լույսը… սենյակում տիրում է խավար…

Յերբ լուսինը դուրս յեկավ ամպի տակից ու լուսավորեց ձյունով ծածկված դաշտերը, մասր Բիջը արդեն վառել եր ելեկտրական լամպը…

Լիզան մեկ տարվա հիվանդի նման բարձրացավ տեղից ու արցունքն աչքերին մոտեցավ դռանը: Հատակն ասես շարժվում եր ոտքերի տակ, իսկ առարկաները կարծես պտույտ գործելով ահա կիկնեն գլխին:

Մասր Բիջը հասավ նրա հետևից և մի բան սեղմեց նրա ափում. աղջիկը, որ սկզբում չհասկացավ, անտարբերությամբ դիմավորեց այդ յերևույթին, սակայն յերբ բացեց ափն— այնտեղ տեսավ մի ճմրթած թղթադրամ…

Վարկյանապես նրա մտքովն անցավ այն միտքը, որ այժմ ինքն



էլ է ճմրթված այնպես, ինչպես այս թղթադրամը…

Յեվ ինչքն է հարկավոր դա…

Հուսահատության ու անզորության կատաղությունը վառվեց նրա այտերի վրա ու նա հետ դառնալով՝ մասրի յերեսով շպրտեց փողն ու դուրս յեկավ:

Ուշ գիշեր եր:

Լուսնի լույսի տակ սառը մարմարի պես փայլում եյին ձյունով ծածկված սարերը: Շուրջը լուռ է ու ամեն ինչ մրափում է խավարի մեջ:

Լիզան տարտամ քայլերն ուղղեց դեպի պոլիգոնի խճուղին ու անհետացավ ճանապարհի վերջացող ծայրում…

Նա այլևս չերևաց, նրան էլ չտեսանք:

Ի՞նչ յեղավ նա: Չգիտեմ:

Ասում եյին, որ ձորում մանկատան սաները տեսել են նրա

անշնչացած դին:

որբորդ Սաթենիկը մասր Բիջի

Լիզայի անհետացումից օրեր հետո,

յերեխաներին զբաղեցնելու համար ուղարկեց մեկ ուրիշի…

Արդյո՞ք նա յել արժանացավ Լիզայի վախճանին… Չգիտեմ, վո—

բոգհետև ինքս էլ թքել եյի նրանց «մարդասիրության» վրա ու փախել

մանկատնից:

# ԹՇՎԱՌ ՈՐԲԵՐ

Երկու որբեր էին նրանք — մեկը տասը, մյուսը՝ 12 տարեկան:

Շատ վաղուց էր, ինչ նրանք որբ էին: Թե յե՞րբ, ո՞ր ժամանակից, քանի տարի է, այդ նրանք չգիտեն:

Միայն այն գիտեն, այն էլ շատ աղոտ, որ վաղո՛ւց, շատ վաղո՛ւց, մի կին պատառոտված շորերով, գզգզված մազերով իրենց բերեց, գցեց պոլիգոնի կազարմաներից մեկի պատի տակ ու ինքը լալով գնաց...

Ո՞ւր: Չգիտեն: Նա այլևս չերևաց, ու նրան յերբեք չտեսան...

Վտիտ և դեղնավուն էին նրանց դեմքերը, մայրական փաղաքշանքի ու խնամքի կարոտ: Չնայած վաղ տարիքին, կյանքի դառնությունն արդեն իր կնիքն էր դրոշմել նրանց մանկական դեմքերի վրա:

Գորշագույն, մռայլ, որպես մահը, յերկհարկանի կազարմայի պատի տակով քայլում էին ձմեռվա ցրտից կուչ յեկած, մատները բերանները կոխելով:

Կիսաքաղց ապրուստից դալկացել էր նրանց դեմքը. հաց ստանալու հույսը հատել էր, դատարկ ստամոքսների համար ուտելիք «թռցնելու» հույսով նրանք մոտեցան խոհանոցին:

Նրանցից փոքրը՝ Վահանը կանգնեց խոհանոցի դռան հետև, իսկ մյուսը՝ Խաչիկը զգուշությամբ ներս ծլկվեց և մոտեցավ անկյունում թափված ճակնդեղի կույտին: Կռացավ, վերցրեց նրանցից մեկը և այն է շրջվեց, որ փախչի, բայց նրա գլխին իջավ տաք ջրից հանած չերեփը... Խաչիկը բարձր ճչած, նայեց վերև և տեսնելով խոհարարի սպառնալից դեմքը, որը պատրաստվում էր յերկրորդ հարվածը հասցնել, հետ դարձավ ու լալով փախավ:

Նրանց հետևից գալիս էր կառավարիչ պարոն Խորենը: Նա տեսավ փախչող մանուկներին, բղավեց կանգնել, բայց յերեխաները սարսափից ու ահը սրտերում չլսեցին և որքան ուժ ունեին առաջ վազեցին:



Կառավարիչը հայհոյելով հետևեց նրանց:

Նրանք վազեցին տների մյուս կողմը և հազիվ մի մեծ բարձրության պարսպից թափված մի քանի քարերի արանքում կծկվեցին, նստեցին: Գետինը ճաքճքեցնող ձմեռվա ցուրտ առավոտ է: Ձյան քուլաներն ու սառցի սուր-սուր լուլաները կախկխվել են դիմացի շենքի պատերից... Մերթ ընդ մերթ մոտիկ ճանապարհով անցնում են սահնակները, որոնց տակ ճռճռում է սառած ձյունը... Ցուրտ է: Ծիրակի խստաշունչ սառնամանիք: Մրսում են նրանք, անչափ մրսում: Սակայն հեռանալ նրանք չեն կարող. կառավարչի ահռելի ու սպառնալից հայհոյանքները մոռացնել են տվել ամեն ինչ... նույն իսկ քաղցը:

Յերկար փնտռելուց հետո Խորենը նկատեց նրանց ու մոտ վազեց, նրա ստվերը անցավ նրանց գլխի վրայով և կանգնեց: Նրանք ճչացին և վռաքի կանգնեցին, որ փախչեն, յերբ նա բղավեց.

— Սպասեցեք, չշարժվեք...

Նա մոտեցավ, բռնեց նրանց օձիքներից և բղավեց՝

— Ձեզ, որ այն ժամանակ ասացի կանգնեցեք, ինչո՞ւ չլսեցիք. տո սատանի ձագլակներ, դուք քանի գլխանի յեք:

Վոչ մի ձայն: Ահը, որ միախառնվել էր նրա ծաղկատար ու սարսափ ազդող դեմքի հետ, կապել էր նրանց լեզուն:

— Ինչո՞ւ չեք խոսում. նորից բղավեց պարոն Խորենը և պատասխան չստանալով, ականջներից բռնած նրանց գլուխները հետ տարավ և նորից առաջ բերելով զարկեց իրար...

Վահանը վայր ընկավ, գլուխը կպավ քարին... բոսորագույն արյունը դուրս ցայտեց ու ներկեց սպիտակ ձյունը:

Դաստիարակ Լևոնը, որ անցնում էր պատի հակառակ կողմով, մոտեցավ նրանց:

Պ. Խորենը շարունակում էր ծեծել Խաչիկին: Նրան կարծես ջղայնացնում էր այն միտքը, թե ինչո՞ւ սա յել յեղբոր որը չընկավ:

Նա մի այնպիսի ամուր ապտակ հասցրեց նրան, որ մթնեցին Խաչիկի աչքերը: Նա մի սուր ճիչ արձակեց, թեքվեց, որ վայր ընկնի, բայց կառավարիչը բռնեց օձիքից, փալասի նման նորից վեր բարձրացրեց և դիմելով դաստիարակին ասաց՝.

— Դրան տանել հիվանդանոց, իսկ յես սրան ցույց կտամ, թե ինչ է նշանակում չլսել իրենից մեծին...

Բռնելով ուժասպառ Խաչիկի թևից, քաշ տվեց նրան իր հետևից:

Դաստիարակ Լևոնը, որի գլխարկի վրա թառել էր [illegible]

նշանը, տհաճությամբ, քթի տակ ինչ վոր բան մռթմռթալով, կռացավ վերցրեց ուշաթափ Վահանին ու դնելով ուսի վրա գնաց...

— Տես է՛, արյունը ներկեց շորերս, իսկ յես այսօր պետք է պարահանդես գնամ, կարծես սրա հոր եշը լինեմ, հիմա չխփեմ դեմքին շան սատակ անեմ: Թու ձեր բիճ... ճանապարհին ասում էր Լևոնը և սրտնեղած ցնցում Վահանի մարմինը...

Մամռապատ շենքը, վոր կրում էր № 18 անունը, թխսկանի նման ծվարել էր հարթության վրա: Նրանք մոտեցան շենքին:

Խորենը կանգ առավ: Մոտեցավ մանկատների վերակացու միստր Բեկերը, վոր տեսնելով Խաչիկին հարցրեց անգլերեն:

— Հը, ինչո՞ւ չեք բռնել դրան, ի՞նչ կա:

Կառավարիչը անգլերեն ասաց մի քանի խոսք, ապա նրան ցույց տվեց Խաչիկից խլած ճակնդեղի փոքրիկ կտորը:

Մստր Բեկերը խոժոռվեց և տարուբերելով լայն ծնոտը, մոտեցավ Խաչիկին, բռնեց նրա ականջներից, ամուր վոլորեց, հետո գլուխն ափերի մեջ առնելով այնպես սեղմեց, վոր ճռճռացին վոսկորները: Ցավ չնայած նրա աղիողորմ լացին ու ճիչերին մստր Բեկերը մի ապտակ էլ իջեցրեց նրա դեմքին, մռթմռթաց ինչ վոր հայհոյանք, ապա դառնալով պ. Խորենին ասաց՝

— Սրան տարեք «դաստիարակության սենյակը» և այնտեղ պահեք մինչև ժամը 10-ը: Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում ուտելու վոչինչ չեք տա...

Հետո մի գոհունակ ժպիտ խաղացնելով կուշտ ու գեր դեմքի վրա ավելացրեց — մստր Խորեն, գովելի յե ձեր մեթոդը, միշտ այս ձևով պետք է վերաբերվել ու դաստիարակել յերեխաներին:

— Շնորհակալ եմ, ամեն ինչ յես ձեզանից եմ սովորում,—ասաց պարոն Խորենը և խոր գլուխ տալով քաշ տվեց Խաչիկին շենքի հետևը:

## 2

Շենքի յետևը ձախ անկյունում մի պատուհանով փոքրիկ խցիկ կա: Նրա հատակը ցեմենտից է: Այնտեղ խոնավ է և սաստիկ ցուրտ: Խցիկի անկյունում կծկվել է Խաչիկը: Ցրտից վնգվնգում ու դողացնում է նա: Ամբողջ մարմինը փշաքաղվել է, իսկ դեմքը սարսափից այնպես է դեղնել, վոր կարծես մահն է խաղում նրա վրա...

Քաղցած է, անչափ քաղցած: Ամբողջ օրը վոչինչ չի կերել: Նա հազիվ հազ վեր է կենում ու մոտենում դռանը, բղավում, զարկում,



վոր դուռն բաց անեն: Բայց լո՛ւռ: Վոչ վոք չի լսում ու վոչ մի պատասխան չկա...

Նա նորից հետ է դառնում և այս անգամ մոտենում պատուհանին, կանչում, գուցե մոտիկից անցնող մարդ լինի: Դարձյալ լո՛ւռ...

Ազատվելու հույսը կորցրած, նա կծկվում է մութ խցիկի անկյունում և սկսում է դառնորեն լաց լինել:

Ցուրտ է, նստելն անհնար, նա բարձրանում է տեղից, լաց լինելով հարվածում պատերին, բայց վայր է ընկնում հատակի վրա և անզորությունից ճանկռոտում ցեմենտը:

Իջնում է յերեկոն:

Խավարն իր անծայր թևերով ծածկում է վողջ պոլիգոնը գորշագույն, մամռապատ շենքերի հետ միասին:

Զրնգ, զրնգ, զրնգ վերջապես հնչեց ժամացույցի տեղ կախված մեծ զանգը:

Զանգի ձայնի վրա սթափվում է Խաչիկը և նստելով սկսում է համարել:

Մեկ, յերկու... 8, 9, 10 վերջապես: Նա ուրախացավ: Չէ, վոր մինչև 10-ն են այդ դժոխքում պահելու նրան:

Սրտատրոփ, ականջը վոտնաձայններ լսելու համար լարած սպասում է նա, վոր ահա հիմա դռան ճեղքում կպտտվի բանալին: Նա դողում է, խփում է դռներին:

Սակայն լուռ, անցնում է յերկար ժամանակ, խփում է ժամը 11-ը բայց լուռ, դուռը չի բացվում:

Մոռացել են նրան, ո՞ւմ հոգն է, թե լաց լինելով քոռանում, ցրտից փետանում և մթության մեջ վախից դիվահար է լինում հազարավոր, մահվան դատապարտված վորբ մանուկներից մեկը:

Ցուրտը, խավարն ու սարսափը խեղդում են նրան:

## 3

Շենքերի շարքից դուրս, բաց դաշտում սեվ փարաջավորի նման նստած է մի հարկանի մեծ շենքը, լուսավորված շլացուցիչ լույսերով: Լույսի ցոլքերը թափանցել են պատուհաններից և բաց դաշտի վրա յերկար շերտով ճանապարհ կազմել...

Ներսում, մեծ դահլիճում, հավաքված է պոլիգոնի «արիստոկրատիան»:

Այստեղ են նաև մստր Բեկերն ու պարոն Խորենը:

Խնձույք է:

Սեղանի վրա շարված են գինու, կոնյակի շշեր, ամեն տեսակի ա-նուշեղեններ...

Մեծ սկուտեղի մեջ մատուցում են տապակած հնդկահավերը:

Խմում են իրար կենաց, ծխում, կատակում, Ուրախանում:

Պարոն Խորենը վերցնում է կոնյակի բաժակը և մոտեցնելով մատր Բեկերի բաժակին, ասում է՝

— Ձեր կենացը, մենք ձեր խոնարհ ծառաները միշտ պատրաստ ենք հլու կերպով ձեր կամքը կատարելու:

Մատր Բեկերը կեղծ համեստությամբ մի ժպիտ է խաղացնում իր դեմքի վրա, և ասում՝

— Թյանք յու, թյանք յու, շնորհակալություն... Ապա բերանը մոտեցնելով պարոն Խորենի ականջին փսփսում է՝

— «Դավադրությունը» պետք է շտապեցնել...

— Հիմա կլինի, մի հինգ րոպեյից, փսփսում է պարոն Խորենը և գլուխը խոնարհեցնում է այնչափ, վոր շուրթերը կպչում են նրա տո-ղայի փեշերին...

— Օլրայթ, օլրայթ, ասում է Բեկերը և մտերմաբար քրքջում:

Նորից լցվում են բաժակները և դարկվում իրար:

Ներս են բերում տաս—տասներկու հասակներն առած գեղեցիկ վորբուհիների՝ պարոնների հետ պարելու և զվարճանալու համար. Թույլ են տալիս նրանց նստել սեղանին և մի բան ուտել:

Ապա օրկեստրը նվագում է ֆոքստրոտ: Պարոններից ամեն մեկը ընտրելով իրեն դուր յեկած աղջկան՝ մտնում է ձգվող զույգերի շար-քը...

Պարն սկսվում է: Տղամարդիկ գրկում են աղջիկների իրանները, ամուր սեղմում կրծքերին և սկսում պտտվել:

Մատր Բեկերը, մոտենում է մի գեղեցիկ վորբուհու և քնքշորեն ասում՝

— Քըմ հիր, մամզել:

Ցեվ նախքան աղջկա մոտենալը, մատր Բեկերը բռնում է նրա ձեռ-քից ու արագությամբ մտնում պարողների շարքի մեջ:

Աղջիկը, հազիվ տասնութ տարեկան, առաջին անգամ տեսնելով այդպիսի շքեղություն ապշել եր:

Յերիտասարդ կանանց թարմ մարմինները դողում են պարոննե-րին, նրանք ավելի ու ավելի ամուր են սեղմում կրծքերին կանացի նուրբ իրանները:



Պարոն Խորենը աչքով է անում սպասուհներից մեկին, որն էլ կատակով մարում է լույսերը: Օգտվելով դրանից, պարոնները նրանց սեղմում են կրծքերին ու համբուրում շփոթված դամաներին: Իսկ յերբ նորից վառվում են լույսերը, նրանք արբեցած մոլի կրքերով, պտտվում են մոլեգնաբար: Պտտվում են այնքան մինչև չաղվում են աչքերը և թմբրում գլուխները...

Մատր Բեկերը դուրս է գալիս շարքից և խելքամաղ յեղած Լու-սինին քարշ տալիս դուրս:

Աղջկան նա նստեցնում է դրսում սպասող ավտոյի մեջ...

Լուսինին սթափվելով ցրտից, կարծես քնից նոր արթնանալով, հետ է հրում նրան և փորձում՝ իջնել վար: Սակայն իզուր: Վախչոտ, խմիչքից կարմրած Բեկերի աչքերը բոցբոքվում են, կատաղությունից Նա ամուր գրկում է աղջկան ու հրամայում շոֆերին՝ քշել...

Դռռում է ավտոն, պտտվում են անիվները և արագությամբ ա-ռաջ թռչում:

## 4

Լույսը մի պահ ցոլաց խցում, լսվեց սլացող ավտոյի դռռոցն ու կանացի լացի ձայնն ու ճիչը, ապա խավարը նորից մտավ ներս:

Խցիկը կարծես նոր զգաց գերեզմանային խավարը:

Նրան տիրում է վախի զգացումը: Հեքյաթային դեվերն ու սատա-նաները, վորոնց մասին լսել եր մեծահասակ վորբերից, կենդանացած ձեվով յերեվում են նրա աչքերին, վորոնք ահա, ահա արշավում են ներս յերախները լայն բացած...

Նա ճչում է սոսկումից, վազում է խցիկի մի անկյունից մյուսը, խփում պատերին, դռանը, այնքան ժամանակ մինչև թուլանում է բռ-լոռվլին ու վայր ընկնում հատակի վրա...

Ուշ գիշեր է: Շրջակայքում մութ է ու մռայլ: Միայն մի քանի վարկյանով դուրս է յելնում իր դադաղից լուսնի անկենդան, սառը սկավառակը: Նրա կաթնավուն լույսը կաթում է խցիկի մեջ և կրկին դուրս յելնում, այնտեղից տանելով անմեղության ու զարհուրելի վոճ-րագործությունների վերջին ճիչը...

* * *

Կեսօրին, յերբ կառավարիչ պարոն Խորենը մի ուրիշ յերեխա բե-րեց «դաստիարակության սենյակը» գցելու, սեասվ դուռը չի բացվում: Ամուր հրեց, մի բան հատակին քսվելով հետ գնաց:

Նրա աչքերի առաջ ընկած էր Խաչիկի ցրտից սառած մարմինը: Նա իսկույն իմաց տվեց մաստր Բեկերին, որը յեկավ շախտայից ուշ: Նա պ. Սուրենի հետ մի քանի խոսք փոխանակեց, ապա կանչել տվեց ծառային՝ Խաչիկի մարմինը դնել տվեց մեշոկի մեջ և հրամայեց անհետացնել...

Գոլիցին—մանկատուն:



# ՑԱՆԿ


| | Եջ |
|---|---|
| 1. Հերոսուհու մահը | 3 |
| 2 Կաթիլներ | 11 |
| 3. Բանաստեղծուհու սիրտը | 18 |
| 4. Գոլորշիներ | 28 |
| 5. Արդյո՞ք խելագար եր | 31 |
| 6. Մարդը զվարճանում ե | 37 |
| 7. Թշվառ որեր | 40 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0350028

Գինը 1 Ռ.

124

39902

Андраник Овсепян
«МУТК» (ВХОД)
(На армянском языке)
Армегиз